




ԵՐԱԿՐՈՆԵՅԱՆ ՄԱՅՐԱԿԱՆ

**ՄԱՅՐ ԱԹՈՒՍ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇԽ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱՐԱԹԱԹԵՐԹ**

Սրբոց Վարդանանց Նվիրված հանդիսություն Մայր Աթոռում

Փետրվարի 7-ին՝ Սրբոց Վարդանանց զորավարաց տոնին, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, Նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատ-

Յարությունյանը: Հանդիսության ընթացքում հոգեւոր ու հայրենասիրական երգերով հանդես եկան Գեւորգյան հոգեւոր ճեմարանի եւ Երեւանի պետական համալսարանի երգչախմբերը, Ներկայաց-



րիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ հանդիսություն: Վարդանանց հերոսամարտին նվիրված ցերեկույթը կազմակերպել էին Գեւորգյան ճեմարանի եւ Երեւանի պետական համալսարանի ուսանողները: Միջոցառմանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, դասախոսներ եւ Հայաստանի բուհերի ուսանողներ:

Հանդիսությունը բացվեց Մայր Աթոռի հոգեւոր կրթական հաստատությունների վերատեսուչ, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գեւորգ եպս Սարոյանի խոսքով, ով մասնավորապես ընդգծեց տոնի պատմական կարեւորությունն ինչպես ներկայի, այնպես եւ ապագայի սերունդների հայեցի դաստիարակության եւ ոգեկերտման համար: Ողջույնի խոսքով հանդես եկավ նաեւ ԵՊՀ պրոռեկտոր, տեխնիկական գիտ. թեկնածու Ռուբեն Մարկոսյանը՝ ԵՊՀ դասախոսական կազմի եւ ուսանողության անունից շնորհավորելով Վեհափառ Հայրապետին՝ անվանակոչության օրվա առիթով:

Միջոցառման մասնակիցներին Վարդանանց սխրագործության մասին բանախոսություն ներկայացրեց ճեմարանի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Ավետիս

վեցին Նաեւ Ավարայրի հերոսներին նվիրված բանաստեղծություններ:

Գեղեցիկ ավանդույթ դարձած այս միջոցառման ավարտին ներկաներին իր պատգամն ու օրհնությունը բերեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունը տոնը հայորդիների ուխտի նորոգության օր նկատեց՝ ներշնչվելու եւ ապրելու Վարդանանց սխրանքով, նրանց օրինակով առաջնորդվելու եւ իրականացնելու իրենց առաքելությունը: Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ Վարդանանց արյունով սրբազորվեց հայրենի հողը, կերտվեց հայ ժողովրդի հարատւության խորհուրդը՝ ապրելու եւ գործելու հանուն հայրենիքի եւ հավատքի: Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորեց երիտասարդներին կյանքում ընթանալ Վարդանանց ոգով, որն իր մեջ կրում է հայրենասիրության ու աստվածսիրության խորհուրդը, եւ տոնի խորհուրդը նկատելով որպես իրենց ուղղված Վարդանանց պատգամ՝ այն կենսագործել ամենօրյա կյանքում:

Խոսքի ավարտին Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց համալսարանի ղեկավարությանն ու ճեմարանի տեսչությանը՝ ոգեշնչող միջոցառման կազմակերպման համար:

Տյառնընդառաջը Մայր Աթոռում

Փետրվարի 14-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշում է Տյառնընդառաջը՝ 40-օրյա մանուկ Հիսուսի՝ տաճարին ընծայման տոնը:

Տերունական տոնի սկիզբն ազդարարվեց փետրվարի 13-ի երեկոյան: Միաձուլվեց Մայր տաճարում երեկոյան ժամերգության ավարտին, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Նախատոնակի արարողություն եւ անդաստանի կարգ:

Արարողության ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր տաճարի իջման սր Սեղանի կանթեղից վառած մոմով՝ Քրիստոսին խորհրդանշող լույսը փոխանցեց հավատացյալներին:



Այնուհետեւ Մայր Աթոռի շրջափակում, ներկայությամբ հարյուրավոր ուխտավորների, վառվեց Տյառնընդառաջի ավանդական խարույկը, իսկ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի սաները հանդես եկան շարականների եւ ազգային երգերի կատարումներով:

Փետրվարի 14-ին՝ տոնի բուն օրը, ինչպես հայոց բոլոր եկեղեցիներում, այնպես էլ Մայր տաճարում մատուցվեց սր Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռ Սբ Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան արքեպիսկոպոս Նավասարդյանը: Պատարագից անմիջապես հետո կատարվեց ավանդական դարձած նորապսակների օրհնության կարգը:



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Սրգաշատի համայնքի անդամներին



Փետրվարի 13-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Արմավիրի թեմի Սրգաշատ գյուղի համայնքի անդամներին՝ ուղեկցությամբ համայնքի հոգեւոր հովիվ Կորյուն արքեպիսկոպոս Առաքելյանի:

Հայր Կորյունը Վեհափառ Հայրապետին ներ-

հույն հայտնեց, որ համախմբված հոգեւոր հովիվի շուրջ՝ նրանք լավագույնս կկազմակերպեն իրենց հոգեւոր կյանքը՝ նպաստելով նաեւ համայնքում տեղ գտնող խնդիրների հաղթահարմանը, հորդորեց ամուր մտալ հավատքի եւ հայրենասիրության մեջ, իրենց ջանքերով նպաստել երկրի շինությանն ու պայծառությանը եւ Եկեղեցու զորացմանը:

կայացրեց համայնքում կատարվող աշխատանքները եւ արձանագրված արդյունքները, մասնավոր անդրադարձ կատարեց նորաստեղծ ծխական խորհրդի եւ երիտասարդական միության գործունեությանը, տիկնանց միության կազմակերպման ուղղությամբ ձեռնարկված քայլերին:

Այնուհետեւ Սրգաշատի համայնքի անդամներին ողջունեց եւ հայրապետական իր օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունը վստա-

ՆԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԵՎՄՏԱՆԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՎՐԱ

1750-1915 թթ. արեւմտահայերը եւ ռանդուն ջանքեր էին գործադրում՝ շուրջ չորս դար տեւած մշակութային թմբիկից դուրս գալու համար։ Ի վերջոյ նրանց ջանքերը հաջողությամբ պսակվեցին։ Հոգեւոր-մշակութային զարթոնքը հնարավոր դարձավ եվրոպական կապերի եւ էթնիկ ավանդույթների հաջողված համադրության միջոցով։ Կարճ ժամանակաընթացքում՝ ավելի կոնկրետ 1840-1875 թթ., արեւմտահայերը կարողացան ստեղծել գրական լեզու, հիմնեցին դպրոցներ, սկսեցին հրատարակել թերթեր, ամ-

կյս ժամանակաշրջանում առաջացավ հայ մտավորականությունը, որի զգալի մասը կրթվել էր Եվրոպայում։ Հենց հայ մտավորականությանն էր վիճակված իր ձեռքը վերցնել Օսմանյան կայսրության համայնքների գործերը։ Նրանք նաեւ մշակութային կապեր ստեղծեցին երիտթուրքերի, Ֆրանսիայի գրական եւ քաղաքական շրջանակների հետ, ինչպէս նաեւ ցարական Ռուսաստանում ապրող արեւելահայերի հետ (*տե՛ս Sharif Mardin, The Young Ottomans, Princeton University Press, 1962*)։ Նշված գիրքը ներկայացնում է

Գրիգոր Օսյանի հարաբերությունները երիտթուրքերի հետ Փարիզում։

Մոտավորապէս 1840 թվականից ծաղկունք ապրեց հայկական աշխարհիկ գրականությունը, այսինքն՝ անհամեմատ ավելի վաղ, քան սկսեց զարգանալ օսմանյան թուրքերի եւ արաբների գրականությունը։ Սկսեցին զարգանալ պոեզիան, քնարական, էպիկական, դասական եւ ռոմանտիկական դրաման, վեպերը, կարճ պատմվածքները, մի խոսքով՝ գրականության բոլոր ժանրերը։ Այդ ժամանակաշրջանում աճել էր կրթված մարդկանց թիվը, թարգմանվում եւ տարածվում էին մեծ թվով եվրոպական գեայուն գրքեր, իսկ Վենետիկի ու Վիեննայի միաբանությունները խորացնում էին գիտական եւ մշակութային կապերը հայ մտավորականության հետ։ Մոտավորապէս 1885-ից մշակութային կյանքը մոտ քսան տարով անկում ապրեց՝ բռնաճնշումների եւ պետական գրաքննության պատճառով։

Առաջին անգամ հայ մտավորականները թուրքերի վայրագության ակնաւատեւը դարձան 1894-96 թթ. զանգվածային կոտորածների ժամանակ, որոնց արդյունքում զոհվեց մոտ 200 000 հայ։ Սուլթան Աբդուլ Համիդ II-ի կազմակերպած ջարդերը կարծես նախապատրաստություն լինեին Հայոց Մեծ եղեռնի համար։ Ինչպէս եւ կարելի էր ակնկալել, հայ գրողներն արձագանքեցին այդ եղերական իրադարձություններին։ Նրանք գրում էին բռնության եւ վայրագությունների մասին, նրանց պոեզիան լի էր վշտով եւ ցասումով, իսկ արձակը՝ կարճ պատմվածքներ ու վեպեր, նվիրված էին քաղաքական թեմային եւ արտահայտում էին սարսափ ու խռովք։ Ցավալի է, բայց հայ գրողների երկերում չէր մատնանշվում որեւէ ելք՝ ստեղծված ծանր իրավիճակից՝ հիմք ընդունելով անցյալի դառը փորձը։

Շարունակությունը՝ էջ 3



սագրեր, ստեղծեցին նաեւ բարեգործական ու մշակութային կազմակերպություններ, հանրային գրադարաններ եւ թանգարաններ։ Հավելենք, որ մինչեւ 1876 թ. միայն Կոստանդնուպոլսում գոյություն ունէր 53 դպրոց (*մայրաքաղաքի հայ ազգաբնակչությանը կազմում էր 100 000 մարդ*), որտեղ ուսանում էր 5620 աշակերտ (*տե՛ս R. Hovhannesian, The Armenian Genocide in Perspective, New Brunswick, Transaction Press, 1987, էջ 175*)։ Դպրոցներն անվճար էին, խառը տիպի, համայնքի կամ Եկեղեցու կողմից հովանավորվող (*Օսմանյան կայսրությունում ազգային փոքրամասնություններին թույլատրվեց դպրոցներ բացել միայն 1789 թ. հետո - տե՛ս Արշակ Աւրոյաջյան, «Գրության հիսուն տարիներ», «Բյուզանդիկոն», N 2229, 1903*)։ Գոյություն ունեին նաեւ ավելի քան հարյուր բարեգործական եւ կրթական կազմակերպություններ՝ դպրոցները ֆինանսավորելու համար։ Մինչեւ 1863 թ. Կոստանդնուպոլսում բացվեց 15 գրադարան։ Նույն ժամանակաշրջանում շրջանառության մեջ մտավ 25 թերթ։ Մինչեւ 1884 թ. թերթերի թիվը հասել էր 88-ի։ 1900 թ. միայն Կոստանդնուպոլսում հրատարակվում էին 6 օրաթերթ եւ 8 ամսաթերթ (*տե՛ս R. Hovhannesian, նշվ. աշխ., էջ 175*)։

Կարգալույծ է հռչակվել Ոսկան քին. Բաղումյանը

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբեգին Բ Շայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Ոսկան քին. Բաղումյանը (Տավուշի թեմ)՝ եկեղեցական ծառայությունից հրաժարվելու մասին իր դիմումի համաձայն։ Կարգալույծ հռչակվածը կդասվի աշխարհականների շարքը՝ Վիգեն Բաղումյան ավագանի անունով։

Լրատվական կյութերը՝ ՄԱՅՐ ԱՅՈՐ ՍԲ ԷՏՄԻԱՏՆԻ ՏԵՆԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին աստուածաշնչեան Ժողովրդավարութեան եւ Քրիստոսի Եկեղեցւոյ առաքելական շրջանի ուղղափառ դաւանութեան 1700-ամեայ պատուար

Սկիզբը՝ 2013 թ. թիվ 2

Հայոց Ե-ԺԸ դարերի մատենագրութեան, ազգային-եկեղեցական ժողովների արձանագրությունների եւ կանոնագրերի մէջ յիշատակութիւններ կան, որ կաթողիկոսների ընտրութիւնների եւ դաւանական խնդիրներ լուծելու նպատակով գումարուած ազգային-եկեղեցական ժողովներին մասնակցել են նաեւ հասարակ շինականները եւ նոյնիսկ կանայք, ինչն անհեթեթութիւն կարող էր դիտուել այդ ժամանակների եւրոպական ամենաառաջադէմ երկրներում... Օրինակ՝ Ներսէս Բ կաթողիկոսի նախագահութեամբ կայացած Դուիկի Բ ժողովը մերժեց Զաղեղոնի ժողովի որոշումները, «եպիսկոպոսաց եւ իշխանաց, տանուտերաց եւ համօրէն ժողովրդականաց» ստորագրութեամբ միահամուռ հաստատեց «մի բնութիւն Բանին մարմնացելոյ» կիրելեան բանաձեւը (*Արշակ Տէր-Միքէլեան, Հայաստանեայց Եկեղեցին եւ բիւզանդեանց ժողովոց պարագայք, Մոսկուայ, 1892 թ., էջ 89-ի տողատակի ծանօթութիւնը*)։

Աբրահամ Ա Աղբաթանեցի կաթողիկոսի (607-615) ընտրութեան մասին Ուխտանես պատմիչն իր աշխատութեան Վասն միաբանութեան հայոց եւ կաթողիկոս ձեռնադրութեան գլխում գրում է. «Իսկ իբրեւ եկին ժողովեցան առհասարակ ամենեքեան՝ եպիսկոպոսք եւ վանաց երիցունք եւ գեղջ քահանայք եւ իշխանք եւ շինականք... ձեռնադրեն զԱբրահամ մեծաւ թախանձանօք եւ բազում աղաքանօք, թեպետեւ ոչ կամաւ եւ յօժարութեամբ նորին՝ Կաթողիկոս» («Իսկ երբ եկան ժողովուեցին բոլորը՝ եպիսկոպոսները, վանքերի երեցներ, գիւղական քահանաներ, իշխաններ եւ շինականներ... իր կամքին ու ցանկութեանը հակառակ՝ ձեռնադրեցին կաթողիկոս» (*Ուխտանես, Պատմութիւն բաժանման վրաց ի հայոց, էջ 61-62*)։ Իսկ 1441 թ. կաթողիկոսական ընտրութիւնների մասնակից Թովմա Մեծփեցու «Յիշատակարան»-ում կարդում ենք. «Եւ բազում վանօրայք եւ կրօնաւոր սուրբ հարք եւ պատուական երիցունք աւելի քան գերեք հարիւր անձինս եւ բազում միայնակեացք եւ ազատք եւ որդիք ազատաց ձեռնաւորք եւ տանուտերք. եւ անթիւ եւ անհամար բազմութիւն ժողովողեան՝ արանց եւ կանանց... հաւանութեամբ ամենայն հայկազեան գաւառի, եղաք հայրապետ եւ կաթողիկոս առաքելական աթոռոյն Թաղէոսի եւ Բարդուղիմէոսի եւ Լուսաւորչին մերոյ սբբոյն Գրիգորի գտեր Կիրակոս Վիրապեցու» («Եւ բազում այլ կրօնաւոր սուրբ հայրեր, պատուական երեցներ՝ աւելի քան 300 հոգի, եւ բազմաթիւ ազատներ, ազատաց որդիներ, տանուտերեր եւ ժողովրդի անթիւ ու անհամար բազմութիւն՝ տղամարդիկ եւ ԿԱՆԱՅԷ... բոլոր հայոց գաւառների հաւանութեամբ.... Թաղէոսի ու Բարդուղիմէոսի եւ մեր սուրբ Գրիգոր Լուսաւորչի առաքելական աթոռին կաթողիկոս դրեցին.... տէր Կիրակոս Վիրապեցուն») (*Թովմա Մեծփեցի, Յիշատակարան, Թիֆլիս, 1892 թ., էջ 52-54*)։ Բնակչութեան բոլոր խաւերի կողմից ազատօրէն ընտրուած մարմինների միջոցով իրագործուող՝ ղեկավարման խորհրդարանական-սահմանադրական սկզբունքն առանց ընդհատումների տիրական է եղել յատկապէս պետականութեան բացակայութեան ընթացքում (1375-1918 թթ.), երբ Հայաստանեայց Եկեղեցին ստիպուած ստանձնել է նաեւ հայութեան աշխարհիկ ղեկավարութիւնը։

Մինչեւ քաղաքական կուսակցութիւնների ձեւաւորուելը (1885-1890 թթ.), մեր Եկեղեցին այդ առաքելութիւնն իրագործել է միայնակ, իր հովանաւորութեամբ գործող զանա-

զան հաստատութիւնների ու կազմակերպութիւնների միջոցով (պարատներ, օդաներ, կտրիճուրաց եղբայրութիւններ, արհեստակցական միութիւններ եւ այլն)։ Հայաստանը նուաճած տէրութիւնների վերջնական նպատակը եղել է հայ ժողովրդի նաեւ հոգեւոր ինքնուրոյնութեան վերացումը, իսկ Հայոց Եկեղեցու նպատակը՝ երկրի պետականութեան վերականգնումը։ Հարիւրամեակների այս խուլ պայքարը զաւթիչներին թոյլ չի տուել կեդրոնանալու հայ ժողովրդի ինքնութեան գերագոյն պատուարի՝ նրա հոգեւոր անկախութեան վերացման վրայ, թէեւ նուաճողները, յատկապէս Բիւզանդիան եւ Ռուսաստանը, այդ ուղղութեամբ միշտ էլ վճռական քայլեր ձեռնարկել են։ Այսպիսով, Հայաստանեայց Եկեղեցին Հայաստանի անկախութեան բարձումից մինչեւ վերականգնումը անընկճելի յամառութեամբ ու հետեւողականութեամբ տոկացել է երկու ճակատով. պահպանել ժողովրդի հոգեւոր անկախութիւնը (առաջնորդուել ս. Գրիգորի հաստատած դաւանութեամբ ու վաղնջական ժամանակներից եկող հայոց սովորութային իրաւունքի վրայ հիմնուած օրէնքներով, պահպանել ու զարգացնել լեզուն, գրականութիւնն ու մշակոյթը, մի խօսքով՝ պահպանել «Հայաստանի քրիստոնէական հանրապե-




տութիւնը»), վերականգնել պետականութիւնը։ ԺՂ դարից սկսած՝ պետականութեան վերականգնման պայքարը եղել է գաղտնի, իսկ հոգեւոր անկախութիւնը պահպանելու գործողութիւնները՝ բացայայտ։ Եկեղեցին անհամեմատ շատ աւելի մեծ յաջողութիւններ է արձանագրել բացայայտ պայքարի ճակատում։ Եւ որովհետեւ հայ ժողովրդի հոգեւոր անկախութեան հիմքը ժողովրդավարութիւնը, ազատութիւնն ու կազմակերպական ապակեդրոնացումն են, ապա այս հանգամանքը բացառել է ժողովրդավարութեան եւ հոգեւոր ազատութիւնների մարգում նուաճողների եւ Հայ Եկեղեցու այնպիսի մի համագործակցութիւն, որը դոյզն-ինչ դիպչէր հայութեան հոգեւոր անկախութեանը։ Ընդհակառակը, Հայաստանեայց Եկեղեցու եւ մեր երկիրը նուաճողների միջեւ միշտ էլ առկայ է եղել հակամարտութիւն։ Ու երբ իշխող ցեղերը փորձել են դիպչել մեր հոգեւոր անկախութեանը, այդ հակամարտութիւնը վերաճել է քաղաքական բախման՝ ապստամբութեան։ Տասնեակ օրինակներից յիշենք ամենապերճախօսները՝ Աւարայրը («Հայոց պատերազմ») ու 1903-1905 թթ. ապստամբութիւնը, երբ Հայաստանեայց Եկեղեցին, հակառակորդի ունեցած ուժային բազմապատիկ գերակշռութեան պայմաններում իսկ, ժողովրդին 451, 482, 484 թթ. ոտքի հանեց Պարսկաստանի, 1905 թ.՝ հազարապատիկ ուժեղ ռուսական կայսրութեան դէմ։

Շարունակությունը՝ էջ 5

ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ ՎԼԵՔԱՎՆՐԻ Բ ԲՅՈՒՅՎԱՆՂՈՒ (1753-1754)

Էջմիածնի միաբանության ընտրությունը կաթողիկոսության հարցում Մինաս Ա Ավետիսյանի մահից հետո կանգ առավ արեւմտահայ հոգեւորականներից առավել ակնառու դեմքի՝ Կ. Պոլսի պատրիարք Յակոբ Նալբանդյանի վրա, որը բոլորի կարծիքով կարող էր խոր շուք հաղորդել Մայր Աթոռին: Պատվիրակություն ուղարկվեց Կ. Պոլիս, որը տեղ հասավ 1753 թվի գարնանը, սակայն Նալբանդյանը ոչ մի կերպ չհամաձայնեց թողնել Պոլսի պատրիարքությունը, որը նրան ժառանգություն էր մնացել Պողոսից: Մայր Աթոռը նրան չգրավեց: Այդ ժամանակ էր, որ Լոռիստանի իշխան Ալիմերդանը գրավել էր Սպահանը, իսկ Շահ-ռուհն էլ շարունակում էր իշխել Մեշեթում: Նալբանդյանի հրաժարականից հետո մեջտեղ եկան Վլեքսանդր Զարաթաշի եւ Սահակ Ահազինի թեկնածությունները: Նույնիսկ Գետրոգ Ղափանցու անունը հռչակվեց: Զննարկման ժամանակ Սահակ Ահազինը մեծապես հորդորեց, իսկ 1753 թ. հունիսի 22-ի ժողովում նա պարզապես պարտադրեց, որ Վլեքսանդր Զարաթաշը դառնա կաթողիկոս, որին բոլորը համաձայնեցին: Արդեն ասվել է, թե Զարաթաշը Զյուլթուրի հետ միասին ինչ ներդրությունների ու տանջանքների ենթարկվեց Ղազար Ֆահկեցու կողմից: Վերջին շրջանում նա քաշվել էր գործերից եւ առանձնացած կյանք էր վա-

րում Կ. Պոլսում: Զարաթաշը հայտնի էր նաեւ Կոստանդնուպոլսի մականվամբ: Սակայն Մ. Օրմանյանը որոշել է նրան կոչել Բյուզանդացի՝ հետեւելով նրա տապալանարարի վրա եղած հորջորջմանը: Ինչ վերաբերում է Զարաթաշ մականվանը, ապա այն նա ստացել էր սեւ եւ թավ հոնքեր ունենալու պատճառով: Սակայն կա տեսակետ, թե դա իր ընտանիքի ազգանունն է եղել, իսկ Կ. Պոլսի բանասերներից կաթոլիկ Կարապետ Զարաթաշյանը կարծել է, որ Վլեքսանդրն իր տոհմից է եղել: Հակառակ իր հրաժարվելուն՝ Վլեքսանդրին պարտադրեցին դառնալ կաթողիկոս: Նա հեզաբար, պարզամիտ եւ աշխատասեր մարդ էր: Կաթողիկոսարանը նրա համար մի տեսակ արժանի հատուցում էր՝ իր նախկին գործունեության դիմաց՝ հակառակ Զյուլթուրի, որի գործունեությունն աչքի էր ընկնում արկածախնդրությամբ: Վլեքսանդրը Կ. Պոլսից դուրս եկավ միայն 1753 թվի հոկտեմբերի 14-ին եւ մեծ դժվարություններով հասավ Էջմիածին 1754 թ. մարտի 2-ին: Եվրոպայում նա հաստատեց Հարություն Բասենցի եպիսկոպոսի առաջնորդությունը: Վլեքսանդրը, Էջմիածին հասնելուց չորս օր անց՝ մարտի 6-ին, որը համընկնում էր Տնտեսի կիրակի օրվա հետ, օծվեց կաթողիկոս: Կարճ ապրեց Բյուզանդացին. նա մահա-



ցավ 1755 թ. նոյեմբերի 11-ին՝ Հրեշտակապետաց շաբաթ օրը: Թաղվեց Մայրավանքի դռան մոտ՝ գանգակատան ներքեւում: Նրա գերեզմանի հանդիպակաց հյուսիսային կողմում թաղված էր Վլեքսանդր Ա Ջուղայեցին, ով մահացել էր նույն օրը՝ 41 տարի առաջ: 1888 թվականին երկու Վլեքսանդրների գերեզմաններն ավելի խոր իջեցնելու պետք զգացվեց, որն էլ իրագործվեց Մակար կաթողիկոսի հրամանով: Այդ արարողությանը մասնակցեց նաեւ Մ. Օրմանյանը:

Վլեքսանդր Բյուզանդացին ժամանակ չունեցավ արդյունավետ գործելու. ինչ խոսք, պատճառն առաջացած տարիքն էր: Սակայն նրա օրոք Մայր Աթոռում խաղաղություն էր տիրում: 1754 թվականի ապրիլի 5-ին նա հատուկ տոմար հաստատեց՝ հասույթներն ու ծախսերը գրանցելու հա-

մար: Այն պահվում է Էջմիածնում՝ որպես առաջին նմուշ Մայր Աթոռի կանոնավոր հաշվետվության:

Վլեքսանդրի մահից հետո Մայր Աթոռի միաբանությունը կամեցավ կրկին կաթողիկոս ընտրել Յակոբ Նալբանդյանի պատրիարքին, որն այդ ժամանակ ընդամենը 54 տարեկան էր եւ վարում էր ակտիվ գործունեություն: Դրա համար Կ. Պոլիս ուղարկվեց եպիսկոպոս Սիմեոն Երեւանցին, ով Կ. Պոլիս հասավ 1756 թվի սկզբներին: Նալբանդյանը կճռականորեն մերժեց: Պատրիարքարանում էլ շատ չպնդեցին, որ Նալբանդյան պատրիարքին չկորցնեն: Նալբանդյանից հետո ամենահարմարը Սահակ Ահազինը համարվեց: Չնայած նա անդադար հրաժարվում էր, սակայն միաբանության ընդհանուր համաձայնությամբ 1756 թվին հռչակվեց կաթողիկոս: Նրա ընտրության հարցում դեր խաղացին Սիմեոն Երեւանցու եւ Մմյուռնիայի առաջնորդ Աբրահամ Աստապատցու առաջ բերած դժվարությունները, որոնք համակրելի չէին հայության համար: Սահակի կաթողիկոսության մասին ծանուցվեց Էջմիածնին, ուր տեղապահ էր Յակոբ Շամախեցին:

Սահակ Ահազինը ծագումով խորճեցի կամ կեղեցի էր, եղել էր Կոլոտի լավագույն աշակերտներից մեկը: Մականվան համար պարտական էր իր հզոր ծային: Սակայն ահազին էր նաեւ մարմնով: Պետրոս Տեր-Հովհաննիսյան կարնեցի քահանան Կարոն Սբ Լուսավորիչ վանքի նորոգման ժամանակ առիթ էր ունեցել բացելու Սահակի գերեզմանը եւ պարզել էր, որ նրա ոսկորներն զգալի մեծ են եղել: Այդ մասին նա անձամբ պատմել է Օրմանյանին:

Շարունակությունը՝ էջ 4



Սկիզբը՝ էջ 2

Նույն բանը կարելի է ասել այն գրականության մասին, որը ստեղծվեց 1909 թ. Ադանայի ջարդերից հետո: Այս անգամ եւս հայ գրողների երկերը չէին պաթոսով ու վշտով: Ի վերջո, հայերը հասկացան, որ անխմստ է հույսեր կապել Եվրոպայի հետ եւ ակնկալել, թե նրանք կլուծեն հայկական հարցը: Հայ ժողովրդի, մասնավորապես հայ մտավորականության մոտ ցանկություն առաջացավ վերադառնալ դեպի ազգի հերոսական անցյալը, նոր ոգեշնչություն եւ ինքնահարգանք փնտրել հեթանոսական, հերոսական պատմության մեջ: Հեթանոսական թեման արժարծվել է հետեւյալ ամսագրերում. «Նավասարդ» (հայկական օրացույցի առաջին ամիսը), «Մեհյան» (հեթանոսական տաճար), «Պակին» (Բագին - հեթանոսական գոհասեղան): Հեթանոսական թեմային են նվիրվել Դանիել Վարուժանի «Հեթանոս երգեր»-ը եւ «Ցեղին սիրտը», Յակոբ Օշականի «Խորհուրդներու մեհյան»-ը եւ Լեւոն Շանթի «Հին աստվածներ» պիեսը:

Սուլթան Աբդուլ Համիդ II-ի եւ հատկապես երիտթուրքերի իշխանության տարիների պատմա-քաղաքական իրադարձությունները դրդեցին հայ մտավորականներին ձերբազատվել ան-

ցյալի պատրանքներից, առավել սթափ գնահատել իրականությունը եւ ցույց տալ հայ ժողովրդին փրկության իրական ուղին: Դժբախտաբար մի շարք խոշորագույն հայ արվեստագետներ, մասնավորապես՝ Դանիել Վարուժանը, Գրիգոր Չոփրապը, Ռուբեն Չարդարյանը, Թլկատինցին, Սիամանթոն, Ռուբեն Սեւակը եւ այլք, զոհ գնացին Մեծ եղեռնին եւ չկարողացան ուղղորդել հայությանը 1915 թ. արհաւիրքից հետո: Արեւմտահայ շատ քիչ մտավորականների էր վիճակված խույս տալ մահվանից եւ շարունակել ծառայել հայ ազգին իրենց մտքի ու գրչի ուժով:

Այսպիսով՝ դեռեւս մինչեւ 1915 թ. արեւմտահայերը հպարտանալու պատճառ ունեին: Հայ ժողովրդի չարչարանքների եւ զոհողությունների ժամանակաշրջանը բերեց իր բաղձալի պտուղները. ձեւավորվեց հայ մտավորականությունը, որի շարքերում էին հայրուրավոր շնորհալի արձակագիրներ, բանաստեղծներ, լրագրողներ, դերասաններ, երաժիշտներ, նկարիչներ, մանկավարժներ եւ այլք: Սուլթան Աբդուլ Համիդ II-ի գահակալությանը հաջորդած տարիների ընթացքում (1909-1915 թթ.) հայ մտավորականները հրատարակեցին առնվազն 135 գիրք: Նույնքան գիրք էլ հրատարակվել էր նախորդ 25 տարվա ընթաց-

ՆԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՂԵՅՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԵՎՄՏԱՆԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՎՐԱ

քում: Բացի մշակութային նվաճումներից, հայերը զգալի ձեռքբերումներ ունեցան Օսմանյան կայսրության սոցիալ-տնտեսական ոլորտում: Հարկ է նշել, որ հայերն ավելի բարձր դիրք էին գրավել Թուրքիայի հասարակական եւ տնտեսական կյանքում, քան կայսրության ազգային փոքրամասնությունների զգալի մասը:

1909 թ. բռնակալ Սուլթան Աբդուլ Համիդ II-ը վերջնականապես գահընկեց արվեց, ինչը լավատեսական տրամադրություններ առաջացրեց Թուրքիայում ապրող ազգային փոքրամասնությունների, մասնավորապես հայերի շրջանում: Բանն այն է, որ հայերը տարիներ շարունակ ճնշվել էին թուրքերի կողմից: Այդուհանդերձ հայ գրողները գերադասում էին չգրել թուրքերի մասին: Այս՝ առաջին հայացքից տարօրինակ իրողությունը չպետք է զարմանք առաջացնի. Թուրքիայի նման հետադիմական եւ ռեակցիոն երկրում թուրքերին եւ նրանց ոչ քաղաքակիրթ պահվածքն ուղղակիորեն քննադատելը կնշանակեր էլ ավելի սրել ազգամիջյան հարաբերությունները: Ահա թե ինչու հայ մտավորականները խուսափում էին թուրք ժողովրդին կտրուկ գնահատականներ տալուց:

Բնորոշելով հայերին մինչեւ հայոց ցեղասպանությունը՝ կարելի է ասել, որ նրանք շատ պահպանողական էին եւ ավանդապաշտ: Հայ ժողովրդի այս առանձնահատկությունները բնորոշ էին նաեւ հայ գրողներին, որոնք մեծ զգուշավորությամբ էին վերաբերվում գրական փորձարարությանը եւ ավանգարդիստական միտումներին: Զննարկվող ժամանակաշրջանում մեծ տարածում

ստացան երգիծական գրականությունը եւ քաղաքական լրագրությունը (երգիծանքը միշտ մեծ ժողովրդականություն է վայելել հայերի շրջանում, իսկ ամենակարկառուն երգիծաբաններից էր Երվանդ Օտյանը, որն այդ ժամանակաշրջանում հասել էր փառքի գագաթնակետին): Այսպիսին էր հայ գրականության վիճակը 1915 թ. գարնանը:


1915 թ. ապրիլի 24-ի գիշերը թուրքական ոստիկանությունը ձերբակալեց Կոստանդնուպոլսում եւ Թուրքիայի մյուս մեծ քաղաքներում բնակվող հայ մտավորականներին: Առաջին օրը ձերբակալվեց 250 մտավորական, իսկ հաջորդող մի քանի օրերի ընթացքում այդ թիվը հասավ 600-ի: Գրեթե բոլոր ականավոր հայ մտավորականները նահատակվեցին, այսպես կոչված, «ժամանակավոր տեղահանության» ժամանակ: Բացի հայ մտավորականներից, Մեծ եղեռնին զոհ գնաց նաեւ 1 500 000 հայ: Ի դեպ, մինչեւ ցեղասպանությունը Թուրքիայի տարածքում ապրող հայկական ազգաբնակչության թիվը կազմում էր 2 500 000 մարդ (տե՛ս R. Hovhannesian, Նշվ. աշխ., էջ 169):

Հավելենք, որ բացի հայ ազգաբնակչության բնաջնջումից, ոչնչացվեցին նաեւ բազմաթիվ գրադարաններ, արժեքավոր ձեռագրեր, ամբողջովին քանդվեցին ավելի քան 1100 եկեղեցի եւ վանք, իսկ 691-ը քանդվեցին մասնակիորեն: Թալանվեցին թվով 1717 վանք եւ եկեղեցի (տե՛ս Le Centre d'information Arménien, Les Arméniens se souviennent, Beirut: Centre, 1965, էջ 47): Սակայն հայ ժողովրդի ամենամեծ կորուստը, չհաշված իհարկե մարդկային զո-

հերը, հայրենիքի անդառնալի կորուստն էր:

Հայ ազգը մասնակի ոչնչացման էր ենթարկվել, բայց եւ այնպես հոգեպես չէր պարտվել, թեեւ ստեղծված իրավիճակն իրոք շատ մռայլ էր եւ անհուսալի: Շատ կարճ ժամանակում ձեւավորվեց հայկական Սփյուռքը, որին առնվազն երկու-երեք տասնամյակ էր անհրաժեշտ ամրապնդվելու համար: Հարյուր հազարավոր սարսափահար եւ սովալլուկ որբ ապաստան գտավ մռայլ որբատներում: Մղձավանքը դարձել էր այդ երեխաների մշտական ուղեկիցը: Նրանք ճշում էին եղեռնի սահմանեցուցիչ հիշողությունների ազդեցության ներքո: Վշտահար հայ գաղթականները փորձում էին ապաստան գտնել աշխարհի տարբեր երկրներում, հիմնականում, իհարկե, Մերձավոր Արեւելքում: Ցեղասպանությանը հաջորդած առաջին տասնամյակների միակ հրամայականը հայության գոյապահպանությունն էր, որի ամենավճռորոշ փուլը ձգվեց մինչեւ 1930-ական թվականները: Հայությունն այլեւս երկընտրանք չուներ: Ամեն բան պետք է գոհաբերվեր հանուն սովի դեմ պայքարի: Անհրաժեշտ էր նաեւ պայքարել հուսահատության եւ ուժացման դեմ: Միակ բանը, որ լավատեսություն էր ներշնչում, հայ ժողովրդի բնատուր կամքն էր եւ իմաստությունը, որը բացահայտվեց այն ժամանակ, երբ հայերը տարբեր երկրներում լավ կազմակերպված ու տնտեսապես զորեղ Սփյուռք ստեղծեցին: Հետզհետե հայ մշակութային կյանքն սկսեց կենդանության նշաններ ցուցաբերել:

Շարունակությունը՝ էջ 7



Ա. ԶԱՓԱՐԻԱՆ

Սկիզբը՝ 2012-ի թիվ 23-24, 2013-ի թիվ 1-2

Օրն սկսվում է, շարունակվում ու ավարտվում: Օրն իր հետ բերում է հոգեբանական տարբեր վիճակներ, եւ ի վերջո մարդը վերստին հայտնվում է այն կետում, որն առավոտյան եղել էր իր սկիզբը: Բանաստեղծը մարդու հոգեբանական շարժումը տեսնում է ծովի օրենքի՝ մակընթացության ու տեղատվության մեջ: Ինքնաճանաչումն ու ինքնաքննությունը շարունակվում ու ավարտվում են շարքի վերջին՝ «Պարապություն» բանաստեղծության մեջ: Դա ժամանակակից նյարդային-ջղաձգված մարդու նկարագիրն է, որը երեւում է անորոշության թանձր մշուշի ինքնակեղեքիչ ապրումների մեջ: Ժամանակակից մարդը՝ իր ապրած կյանքով, արարքներով, խոսքով ու հիշողությամբ, մտքերի ճյուղավորումներով ու պայծառատեսությամբ: Սա այն մարդն է, որը Պ. Սեւակի ձեռագրերումով՝ «առավել բարդ կառուցվածք ունի, քան Դանտեմարքայի արքայազնը»:

«Եղիցի լույս» շարքը ներքին ամուր տրամաբանությամբ, զգացմունքների ու մտքերի աստիճանական զարգացմամբ ու փոփոխությամբ սկիզբ ու վերջ ունեցող ինքնուրույն ու ամբողջական կառուցվածք է: Ծարքի 15 բանաստեղծություններում

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

(շափածո, արձակ, թատերգություն)

հնչում է ժամանակակից մարդու հոգեւոր ուժերի ակտիվությունից ծնված մի ամբողջ համանվագ:

«Եղիցի լույս» շարքին հաջորդում է «Դիմակներ» շարքը: Դիմակը գալիս է քողարկելու ժամանակակից մարդու ներքուստ միևնույն վերջ բացված-մերկացած էությունը: Դիմակի տակ թաքնված մարդիկ՝ միաջանին, միոտանին, հարբեցողը, խեղկատակը, ծաղրածուն, խաղալիք սարքողը, կյանքի դրամատիզմի մեջ մտցնում են ֆարսը եւ ճշմարտության ձգված լարը թուլացնում խաղը-կատակների մեջ: Սկսված խաղն իր օրենքն է պարտադրում: Ծմարտությունը, որ միևնույն այդ ինքնակա էր, հզոր ու ինքնիշխան, որ սխրանքի էր տանում դիմակ չդրած մարդուն, հիմա սկսում է աղավաղվել, դիմակավորվել եւ ներքաշվել պարապ գվարձասերների խաղի մեջ: Սկսվում է դիմակահանդեսը. միաջանին, միոտանին, հարբեցողը, խեղկատակը, ծաղրածուն, խաղալիք սարքողը՝ յուրաքանչյուրը, յուրովի փորձում են գտնել ու մեկնաբանել ճշմարտությունը: Բայց սկսված խաղը դեռես ավարտված չէ, իր խոսքն ունի ասելու դիմակահանդեսի գլխավորը, որն ինքը՝ բանաստեղծն է: Դարձյալ առանց դիմակի ու մերկ նյարդերով նա կանգնում է հանրության առաջ եւ դիմակահանդեսը հայտարարում ավարտված: Հանդիսանքի կենտրոնում կանգնած՝ դիմակահանդեսի գլխավորը, նա՛, ով «Առավոտ Լուստ» եւ «Լույս գվարթ» էր եղել, նույն սխրանքի պատրաստ ոգեշնչումով դիմում է իր շուրջ խմբված դիմակավորներին. «Լսո՛ւմ եք ինձ: Բավական է, Հանդես՝ ձեր դիմակները <...> Ինքնե՛րդ ասեք. Բավական չե՞ Դուք ձեզանից ձեզ գողանաք եվ տեղն ուրիշ մեկին դնեք ձեր փոխանակ» («Դիմակահանդեսի գլխավորը»): Բանաստեղծի խոսքը դառնում է հրապարակային դիմում՝ ուղղված բոլոր նրանց, ովքեր պղծում են ճշմարտությունը, ովքեր ստեղծում են «անջատ ու անվնաս» թվացող «բարոյական այն պարապը», որը թույն ու փոշի է խառնում «հացին, երգին, մտքին, շնչին»: Խաղն ավարտվում է բանաստեղծի հրաժարական-հեռացումով իր շուրջ դիմակահանդես բացած բոլոր երեսպաշտներից, որոնք մորթում են «մարդկայնություն-մարդկությանը»:

Ծարքն ավարտվում է «Իրերի բնություն» եռամաս բանաստեղծությամբ («Իրերի դեմքն ու դիմակը», «Իրերի բարությունն ու չարությունը», «Իրերի դատն ու դատաստանը»), ուր իրերը եւս խոսքի մեջ են քաշվում՝ որպես որոշակի իմաստ ունեցող դիմակ-խորհրդանշաններ: Այս դեպքում իրը՝ աթոռը, գլխարկը, համազգեստը, խորհրդանշում են պաշտոն ու հանրային դիրք: Բանաստեղծությունն ուղղված է հանրային չարիք դարձած պաշտոնամոլության եւ օրենսգրքային տառակերության դեմ, այն ամենի դեմ, ինչը կրճատում է լույսի տարածությունը: Դիմակների այս խաղն ավարտվում է դատ ու դատաստանով, որպեսզի գրքի հաջորդ՝ «Դարակեսի պարզեներ» շարքն սկսվի մի բանաստեղծությամբ, որը վերնագրված է «Դիմակների փոփոխություն» հոգուտ անդիմակության»:

Այստեղ եւս ժխտման ու հաստատման դրդապատճառները նույնն են. մի կողմում լույսի շարունակությունն է՝ արդարության, ճշմարտության շողարձակումով, մյուս կողմում՝ խավարի թանձր գանգվածը՝ կեղծիքի ու ստի ստվերներով: Բանաստեղծի մարտահրավեր-բռնկումը վերստին հասնում է բարձր լարվածության, նրա փոթորկուն տարերքը կործանարար է: Այդ բռնկման մեջ ծնունդ է առնում «Դարակեսի հիմնը» բանաստեղծությունը. հիմն՝ հույսի ու հավատի, մարդու ու ժամանակի, որ հնչում է դարերի միջից եւ ազդարարում քսաներորդ դարակեսի գալուստը: Խոսքը կառուցված է ժամանակային երկու հոսքով. մի կողմում անցյալն է ու անցյալից բանաստեղծին վիճակված ճակատագիրը, մյուս կողմում՝ ներկան՝ նորոյա բանաստեղծի հոգս ու ցավով: Ծատ

լավ իմանալով իր նախորդների ճակատագիրը, որոնց արդար խոսքի համար քառատել են ու խոշտանգել, նորոյա բանաստեղծը եւս ուզում է սմանվել նրանց ու դառնալ մարգարե: Նորից խոսքի սլաքն ուղղվում է կյանքի դիմակահանդեսային կեղծիքի դեմ, եւ մերկ ու զրնգուն հնչում է դարակեսի բանաստեղծի հուժկու ձայնը:

Այս ընթացքում ծնվում է «Առաջադրանք համայն աշխարհի հաշվիչ մեքենաներին եւ ճշգրիտ սարքերին» բանաստեղծությունը: Գիտական մտքի նվաճումների դիմաց կանգնում է պարզ ու հասարակ մարդը եւ նորից մնում անճանաչելի: Ամեն ինչ կարելի է հաշվել ու հաշվարկել, ճանաչել՝ ըստ չափումների, բացի մարդուց: Մեքենաներին տրվող առաջադրանքներն ավարտվում են մի վերջին հրահանգով, որ կոչված է պարզելու. «Թե այդ ի՞նչ ձեռով, ի՞նչ մեքենայի օգնությամբ բարի Դեռ կարելի է մարդուն մա՛րդ պահել եվ կամ նո՛ր միայն մարդուն դարձնել Մա՛րդ»:

Մարդախուզական նույն այս ոգին շարունակվում է «Կայանալիք զբոսանք» բանաստեղծության մեջ, ուր, ըստ բանաստեղծի, «Մեր երկտողանց ճակատագիրը մնում է դարձյալ Անընթեռնելի ու անմեկնելի»: Այս դեպքում է, որ վերստին հզորանում է բանաստեղծի տեղն ու դերը ժամանակակից կյանքում, քանի որ նա՛ է, որ որպես մարգարե ու մարդագետ, ունակ է ճանաչելու մարդուն եւ թարգմանելու նրա հոգու խլիղությունը: Բանաստեղծը նաեւ աշխարհը բարոյական հիվանդություններից մաքրող սանիտար է, որ մարդկության խղճին է թողնում իր ճակատագիրը («Աշխարհ... աշխարհ», «Ճամփեզրի խոտը», «Հայնցիկություն»): Ժամանակակից մարդու կերպարի խորհրդանշան դարձած բանաստեղծի ճակատագիրը է՛լ ավելի է խորացնում համամարդկային, հանրային լայն նշանակություն ունեցող հարցադրումները. «Ի՞նչ է սպասվում այս մոլորակին, - Ի՞նչ պատասխանես:

Շարունակությունը՝ էջ 6

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՄԿՈՍՆԵՐ


ՎԼԵՔԱԿՆԴՐ Բ ԲՅՈՒՋԱԿՆԴԺԻ (1753-1754)

Սկիզբը՝ էջ 3

Ծանոթ լինելով նրա նախորդ գործունեությանը՝ նշենք, որ նա ավելի ուշ դարձել էր Չմյուռնիայի առաջնորդ, որտեղից 1755-ին եկել էր Կ. Պոլիս: Նա դժվարությամբ էր համաձայնվել դառնալ կաթողիկոս եւ իրականում էլ չդարձավ. կաթողիկոսություն առանձնապես չվարեց: Նույնիսկ նրա օծումը չկատարվեց: Նա համարյա երկու տարի հետո միայն՝ 1757 թվի վերջերին, դուրս եկավ Կ. Պոլսից, հասավ Կարին, տեղավորվեց տեղի Սբ Գր. Լուսավորիչ վանքում, որը գտնվում էր Մուսուրկա լեռան բարձունքում, ապա Հինձքի Կարմիր վանքում եւ բավական երկար ժամանակ մնաց այնտեղ: Այդ դանդաղությունը շատերին դուր չէկավ, ուստի որոշեցին նրա ընտրությունը չեղյալ հայտարարել եւ նոր կաթողիկոսի ընտրություն նշանակել: Սահակին ընտրել էին 1756 թ. փետրվարին, իսկ նորի ընտրությունը եղավ 1759 թվի օգոստոսին, այսինքն՝ Մայր Աթոռը 3.5 տարի թափուր մնաց՝ Սահակի տարօրինակ վարքագծի պատճառով:

Բոլորի համար էլ գաղտնիք մնաց Սահակի անհասկանալի պահվածքը: Ասել, թե նա երկյուղում էր այդ պաշտոնից, կասկածելի է, քանի որ նա կարող էր երկրորդ անգամ եւս կտրականապես հրաժարվել ընտրվելուց: Հազիվ թե Պարսկաստանի խառնակ վիճակն էր պատճառը, ապա նա

եւս կարող էր հետեւել Միսափին եւ Վլեքսանդրին եւ մեկուսանալով Մայրավանքում՝ գիրք գրել: Եթե վախենում էր միաբնության հակառակություններից, ապա պետք է հրաժարվեր կաթողիկոսությունից: Ցավոք, չեն գտնվել կամ բացահայտվել Սահակի նամակները, որոնք կարող էին լույս սփռել այդ արարքի վրա: Որքան էլ զարմանալի լինի, Սահակ Ահագինի անունը մտել է կաթողիկոսական ցանկի մեջ՝ Սահակ Ե Կեղեցի անվամբ: Միանգամայն ճիշտ է Մ. Օրմանյանը, երբ նրան օրինական կաթողիկոս չի ընդունում, քանի որ նա չի օծվել, կաթողիկոսական աթոռին չի բարձրացել եւ կաթողիկոսություն չի արել: Նույն ձեռով է մոտեցել նաեւ Սիմեոն Երեւանցին, որի կազմած ցանկում նա չկա: Իսկ Շահխաթունյանցը նրա անունը հիշում է միայն ծանոթագրության մեջ: Հարկ է նշել, որ Սահակը նույնիսկ եպիսկոպոս չի ձեռնադրել, էլ չենք խոսում կոնդակ արձակելու մասին: Միակ կատարածն այն է, որ բացել է կաթողիկոսության հասույթները, սակայն դրանցից ոչինչ չի ուղարկել Էջմիածին: Իսկ երբ նրանից հրաժարվելու եւ նոր կաթողիկոս ընտրելու խնդիրը մեջտեղ եկավ, Կարին ուղարկեցին Աստապետացուն, որպեսզի ստուգի նրա՝ հասույթներից ստացածը: Ինչպես երեւում է, նպատակը միայն հաշիվները պահանջելն էր եւ ոչ թե գումարները գանձելը:



Ճիշտ չէ նրան նաեւ Սահակ Ե անվանելը, քանի որ նա ո՛չ կաթողիկոս եղավ եւ ո՛չ էլ՝ տեղապահ: Նրա օրերում կաթողիկոսների թվարկության համարը դեռ չէր օգտագործվում, ուստի այդ հիմնադրող (Ե) թվարկությունը կարելի է հետագա որեւէ Սահակ անունով կաթողիկոսի համար գործածել: Սահակի հեռանալուց հետո գրեթե չորս տարի Մայր Աթոռը թափուր մնաց. գործերը վարեց տեղապահ Հակոբ Շամախեցի եպիսկոպոսը:

Այդ՝ համարյա չորս տարվա ընթացքում գանազան դեպքեր տեղի ունեցան Հայոց Եկեղեցու Աթոռներում: Կոլոտի աշակերտներից Սարգիս Սարաֆյան եպիսկոպոսը, որ Գաղատիայի առաջնորդությունից հետո Երուսաղեմի նվիրապետությունն էր վարում եւ ձեռքից մաքուր չէր, Նալյանի

շնորհիվ վճարած գումարի համար Շղթայակից մուրհակ էր ստացել ու գալով Չմյուռնիա՝ որոշել էր գնալ Արեւմուտք՝ օգտվելու համար լատիներներից: 1744-ին գնաց ուղիղ Վենետիկ, 1745-ին՝ Հռոմ եւ երկու տարի այնտեղ մնալուց հետո կրկին վերադարձավ Վենետիկ: Այստեղ նա զբաղվեց հրատարակչական գործով՝ իր համար հատուկ տառատեսակներ պատրաստել տալով: Ձեռնարկելով այդ գործը՝ նա նաեւ նյութական շահ էր հետապնդում, որն առանձնապես չհաջողվեց, ուստի կրկին մեկնեց Հռոմ եւ Լիվոռնո եւ ի վերջո վերադարձավ Չմյուռնիա, երբ այստեղի առաջնորդ Սահակ Ահագինն էր: Այժմ նա կամենում էր դրամ շահել Արեւելքում:

Նույն շահադիտական նպատակներով նա Չմյուռնիայից մեկնեց Պրուսա եւ Կ. Պոլիս: Այստեղ նա փորձեց իր կողմը գրավել իր ընկերներներից Նալյան պատրիարքին՝ հռոմեադավանության իր քարոզչության աջակցելու համար, սակայն արդյունքի չհասնելով՝ ստիպված եղավ հրաժարվել հռոմեադավանությունից, որից հետո նրան նշանակեցին Ռոդոսթոյի առաջնորդ: Սարգիս Սարաֆյանին օգնելու համար Սամվել Երզնկացի վարդապետն ստիպված եղավ միջնորդել Նալյանի մոտ, երբ Սահակ Ահագինը վատ էր տրամադրված նրա դեմ: Այլ խոսքով՝ Սարգիսը երբեք Ռոդոսթոյի առաջնորդ չէր դառնա, եթե չվերադառնար հայադավանության գիրկը: Միաժամանակ այս փաստը խոսում է նրա հեղիեղուկ բնավորության մասին, որ հանուն իր օգուտի՝ կարող էր այս կամ այն կողմն անցնել:

Շարունակելի

Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԳԱՍ թղթակից անդամ, պրոֆեսոր



Սկիզբը՝ թիվ 2

Ո՞րն է լատինական այբուբենի առաւելութիւնը:

Հարիրամեակներով այդ այբուբենը կատարելագործուել է ու դարձել բոլոր մշակութային ժողովուրդների սեփականութիւն:

Մի պահ պատկերացնենք, որ գոնէ Աւերկովկասի ժողովուրդների համար ընդհանուր ուժերով մենք կարողացել ենք ստեղծել այնպիսի այբուբեն, որպէսզի բոլոր հնչիւնները, որ կան բոլոր կովկասեան լեզուներում, ունենան միեւնոյն գծագիրը: Ասենք՝ *a*, *b*, *d* եւն բոլոր լեզուներով գրուէին, տպագրուէին եւ արտասանուէին միատեսակ:

Այդ լեզուներից իւրաքանչիւրի մէջ կլինեն հնչիւններ, որ չկան լատինական այբուբենում: Բայց այդ հնչիւններից շատերը մենք կգտնենք կովկասեան բոլոր լեզուներում: Օրինակ, *ջ* հնչիւնը, ասենք, *ջան* բառի մէջ, որ կայ ե՛ւ հայերէնում, ե՛ւ թիւրքական, ե՛ւ վրացական լեզուներում:

Պ. ՄԱԿԻՆՉԵԱՆ

ԼԱՏԻՆԱԿԱՆ ՏԱՌԵՐԻ ՇՈՒՐԾ

րում: Անհրաժեշտ է, որ այդ հնչիւնի համար ընդունուած գծագիրը ընդունելի լինի բոլոր լեզուներին, որ ունեն այդ հնչիւնը: Այնժամ կմնայ հնչիւնների շա՛տ, շատ փոքր քանակ՝ իւրայատուկ լոկ միակ լեզուի եւ չկան մնացեալ լեզուներում:

Ահա այս մէկ կամ երկու լրացուցիչ նշանը հարկ կլինի իւրացնել՝ դառնալու համար գրագետ:

Այսպիսի հարցադրման պարագային միասնական գիրը տնտեսում կանի թե՛ հարեանի, թե՛ եւրոպական ժողովուրդների, այդպիսի գիրն ու գրութիւնն ընդունած ամեն մի ժողովրդի գիրը սովորելու համար:

Հարցի այսպիսի լուծումը վիթխարի տնտեսում կտար տպագրական գործում, անմիջապէս մեր տպարանները կհարստացներ տառատեսակներով, մենք կշահէինք նաեւ աչքի առողջութեան իմաստով:

Սրանից աւելի քան երկու տարի առաջ Հայաստանում ընդունուեց ուղղագրութեան փոփոխութեան օրենքը: Այժմ ԽՍՀՄ ասիմաններում ռեֆորմը իրականացուած է լիովին: Սակայն արտասահմանի շատ հայ գաղութներ՝ Սիրիան, Կոստանդնուպոլիսը, Փարիզը, Եգիպտոսը, Ամերիկան եւն, նաեւ Վիեննայի ու Վենետիկի գիտական Միութեան միաբանութիւնները մինչ օրս ոչ միայն չեն անցել նոր ուղղագրութեանը, այլեւ առիթ բաց չեն թողնում հեզնելու ռեֆորմը՝ «խեղագրութիւնը»:

Պէտք է նշել, որ այդ հարցում դեռեւս միասնականութիւն ձեռք չի բերուել նաեւ խորհրդային երկրում: Բաւական է յիշել Մալխասեանի առարկութիւնները (մենք

չենք անդրադառնում՝ թէ որքան ճիշտ են այդ առարկութիւնները): Նոյնիսկ մեր ընկերների մէջ քիչ չեն այնպիսիք, որ ոչ միայն համաձայն չեն նոր ուղղագրութեանը, այլեւ իրենք են շարունակում գրել հնով:

Այս ամենը մեզ ստիպում է այդ հարցը վերստին դնել քննարկման:

Ինչպէս յայտնի է, հայերէնի ուղղագրութեան խնդիրը լուծուել էր լոկ կիսատպառատ: Մանուկ Աբեղեանի նախագիծը պարզեցնում է միայն ձայնաւոր հնչիւնների հարցը: Ինչպէս ամեն լեզուի, նոյնպէս եւ հայերէնի բաղաձայն հնչիւններն անհամեմատ շատ են, դրանցից՝ երեքական գծագիր, օրինակ, շրթնային՝ **պ**, **բ** եւ **փ**, առամային՝ **տ**, **դ** եւ **թ**, կոկորդային՝ **կ**, **զ** եւ **ց**: Բացի այդ, այժմ շատ տառեր որոշ բառերում եւ որոշակի վերջավորութիւններում փոխել են իրենց հնչումը եւ արդէն այժմեան արտաբերմամբ համապատասխանում են այլ տառերի (**մարթ**՝ գրում է **մարդ**, **վարթ**՝ ունի **վարդ** գրութիւնը):

Այս ամենը անհրաժեշտութիւն է առաջացնում ռեֆորմը ամբողջացնելու, տրամաբանական աւարտին հասցնելու գրութեան եւ արտասանութեան համապատասխանութիւնը: Անհրաժեշտ է, որ լեզուի մէջ այլեւս չլինի դէպք գրելու այսպէս, բայց կարդալու **այլ կերպ**:

«Գրիր այնպէս, ինչպէս խօսում ես» իմաստով [արուած] հայերէնի ուղղագրական փոփոխութիւնը հնարաւոր է դարձնում գրութեան, տառերի ռեֆորմը: Այդ հանգամանքը նկատի ունէր ակադեմիկոս Ն. Եա. Մառը, որ տակաւին հայ ուղղագրութեան ռեֆորմի վերաբերեալ դէկրետից առաջ իր հեղինակաւոր կարծիքը յայտնեց յօգուտ ռեֆորմի:

Ահա այդ կարծիքը:

«Ծանօթանալով հայոց ուղղագրութեան ռեֆորմի հիմունքին՝ առաջարկուած Մանուկ Աբեղեանից, եւ դրանից բխող անհրաժեշտութիւնը՝ փոխելու մի շարք գծապատկերներ, որ հայկական հնչիւններն արտայայտում են այժմեան արտասանութեամբ, յատկապէս ձայնաւորներն ու ձայնորդները, միայն կարող եմ ուրախութիւն արտայայտել եւ ոչ միայն խրախուսել, նաեւ այնպիսի նախաձեռնութեան առթիւ, որ պէտք է անել, ըստ իս, **առաւել արմատականօրէն կատարել Կովկասի բոլոր ժողովուրդներին մէկ ընդհանուր հիմքով այբուբենի շուրջը միաորելու ուղղութեամբ**, եւ ամեն մասնաւոր դէպքում ընդհանուր սկզբունքների միանգամայն յաջող տեխնիքական իրագործման առթիւ:

7 ապրիլ 1922 թ.

Յաբթաբանական ուսումնասիրությունների հաստատութեան տնօրէն ակադեմիկոս Մառ»:

Ն. Եա. Մառի վերջին միտքը լատինական գրերին անցնելու մասին՝ մեր ընկերներից շատերի համար պակաս կարեւոր նշանակութիւն չունէր ուղղագրութեան ռեֆորմի ժամանակ:

Անձամբ ես ոչ մի դէպքում ոչ միայն չէի քուէարկի ռեֆորմի օգտին, այլ քննարկման չէի ներկայացնի ժողովմսորի, եթէ այն չդիտէի որպէս լատինական գրին անցումը դիւրացնող մի աստիճան: Եթէ հայ ուղղագրութեան ռեֆորմին վճակուած է վճռուել կէս ճանապարհին, ապա աւելի լաւ է պարզապէս անցնել հին ուղղագրութեանը, որ մինչ Աբեղեանը լռելէայն, առանց որեւէ աղմուկի որոշ հայ գրողներ բարելաւել են: Բայց այժմ արդէն միանգամայն ակնյայտ է դարձել, որ ընդունուած ռեֆորմը մեզ կտրել է արտասահմանեան գանգուածներից:

Շարունակությունը՝ էջ 8

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին աստուածաշնչեան ժողովրդավարութեան եւ Քրիստոսի Եկեղեցւոյ առաքելական շրջանի ուղղափառ դաւանութեան 1700-ամեայ պատուար


Սկիզբը՝ էջ 2

Երկու դէպքում էլ յաղթանակը լիակատար էր: Հայը մնաց իր Եկեղեցու եւ դպրութեան ծոցում, այսինքն՝ վերականգնեց իր անկախութիւնը: Մեր երկիրը նուաճած բռնապետութիւնների հետ մշտագոյ ահա այս հակամարտութիւնն էր, որ թոյլ չը տուէր Հայ Եկեղեցու ժողովրդավար եւութիւնը տեղի տայ, եւ մեր ազգային ներքին կեանքում տիրապետի իշխողների բանեցրած կառավարման բռնապետական եղանակը: **Նշուած հանգամանքի շնորհիւ կառավարման բռնապետական-վարչարարական եղանակը ոչ միայն մերժելի ու հակոտնեայ, այլեւ տրամաբանօրէն հակառակ է ազատութեանն ու ժողովրդավարութեանը** միաիւսուած մեր ժողովրդի հոգեբանութեանն ու խառնուածքին, որը գալիս է Հայկ Նահապետի ժամանակներից: Ահա Եկեղեցու գոյութեան հիմքն ու խորհուրդ խորինը հանդիսացող այս հանգամանքնե՛րն են Հայ Եկեղեցին դարձրել ժողովրդավարութեան, ազատութեան ու անկախութեան կրօնակը, պահապանն ու դրօշը **Արեւելքում**: Ընդ որում՝ պէտք է արձանագրել մի շատ կարեւոր հանգամանք. հայոց ազատագրական պատերազմները, Հայկ Նահապետի մեծագործութիւնից սկսած, Աւարայրով վերջացրած, մեր ազգային դաւանանք-գաղափարաբանութիւնը պահպանելու

հոգեւոր ազատամարտեր են եղել (*Յիսուս Քրիստոսի Յայտնութիւնից 2492 տարի առաջ (հաշուարկել է Յովհաննէս սարկաւազ Իմաստասէրը (1045-1129 թթ.) մեր նախահայրը ոչ միայն դիմակազերծեց իրեն աստուած հռչակած բռնակալին, այլեւ նրա իսկ եկթականների աչքի առաջ «սատակեց աստուածակարծեալ մտեղէն արձան»-ին (Սէբեոս): Այս մասին Վարդան Արեւելցին, վկայակոչելով հայ եւ օտար բազմալեզու աղբիւրներ, գրում է. «Հայկը այդ երկրի 71 նահապետների նման Բելի պատկերը չը պաշտեց, այլ նրանց պատկերապաշտ կենդանի առաջնորդին շուն կոչելով՝ սատակեց»:* (*Ղուկաս Ինճիճեան, Յնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Վենետիկ, 1835 թ., հատոր Բ, էջ 148-149, 306: Վարդան Արեւելցի, Ներքողեան մեծիմաստ վարդապետին Վարդանայ երիցս երանեալ Պարթէն Գրիգորիոս Լուսաւորիչ Հայաստան աշխարհ, գետեղուած է «Ներքողեանք ի սուրբ Գրիգոր Լուսաւորիչ» («Սուրբք») հատորեակում, Վենետիկ, 1853 թ., էջ 43-44): ԺԱ դարի վրաց պատմիչ Լեոնտի Մրովելին (Ռուխեցի), «Քարթլիս ցխովերբա» ժողովածուի մէջ նշում է. «...Հայոսը այդ եօթ հսկաներին ժողովեց եւ աւասց. «Օգնութեամբ արարչի չլինենք ոչ ոքի ծառայ, եւ ոչ ոքի չծառայենք, բացի Արարիչ Աստուծուց... Եւ Հայոսը արձակեց նետը եւ զարկեց Ներքոթի կրծքին, պղնձեայ տախտակն անցնելով, դուրս եկաւ նրա թիկունքից» (*Հայ ժողովրդի պատմութեան քրեստոմատիա, Երեւան, 1981 թ., էջ 112-114*):*

Սա կնշանակի՝ հայերս ոչ միայն սկզբից ի վեր եղել ենք ճշմարիտ աստուածապաշտ-միասնուած, այլեւ բազմաստուածութիւնը ձեւաւորուելու ժամանակ սկզբնաւորել ենք քաղաքակրթութեան հոգեմարտը կռապաշտութեան ու բազմաստուածութեան դէմ: Դա խղճի ազատութեան ու իրաւ աստուածապաշտութեան համար մղուած առաջին ինքնապաշտպանութիւնն է մարդկութեան պատմութեան մէջ, որով մեր մեծագործ նախահայրը կընում է Տիեզերական Եկեղեցու աստուածաշնչեան սրբերին...

Հայաստանեայց Եկեղեցու գլխաւորութեամբ 451 թ. Աւարայրում իր դաւանանքի ազատութիւնը պահպանելու համար հայութեան վարած գանգուածային ազատամարտը ըստ եւութեան դարձեալ մարդու եւ ազգերի իրաւունքների, խղճի ազատութեան, օրենքի գերակայութեան եւ համամարդկային այլ արժեքների համար պայքար էր: Աւարայրի շարունակութիւնը հանդիսացող 481-484 թթ. ազատագրական պատերազմի յաղթանակից յետոյ Վահան Մամիկոնեանի



ձեռքով Պարսկաստանին ներկայացրած հայերի երեք հիմնական պահանջները, որ այդ երկիրը ստիպուած եղաւ կատարելու, դրա փայլուն վկայութիւնն են. **«Եւ է մինն յերիցն՝ նախ եւ առաջին խնդիրս այս կարելոր է պիտանի, եթէ զհայրենի եւ զքնիկ օրէնս մեր ի մեզ թողուք, եւ զՀայ այր զոք մի՝ մոզ ոչ առնէք... Եւ քրիստոնէայ մարդկան եւ քահանայից զկարգ եւ զպաշտօնն քրիստոնէութեան համարձակութեամբ եւ աներկիւղ տայք պաշտել՝ ուր եւ կամին... Եւ երկրորդ խնդիրն այս է, թէ զմարդ ոչ ԻԾԽԱՆԱԲԱՐ ճանաչէք, այլ ԻՐԱՄԱԲԱՐ գիտել զլան եւ զվատթարն** (այս երեքից մէկը նախ եւ առաջ այս կարելոր է պիտանի խնդիրն է՝ որ մեր հայրենի եւ քնիկ օրէնքները մեզ թողնէք, հայ ոչ մի մարդու մոզ չը դարձնէք... քրիստոնէայ մարդկանց եւ քրիստոնէաներին թոյլ տաք քրիստոնէական կարգն ու պաշտօնը համարձակ եւ աներկիւղ կատարել՝ ուր որ կամենան... Եւ երկրորդ խնդիրն այն է. որ մարդկանց ճանաչէք ոչ թէ իշխանաբար, այլ իրաւաբար

իմանաք լան ու վատթարը (*Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, Երեւան, 1982, էջ 391*):

Ասել է թէ՛ հայ ազգն իր արեան գնով է նուաճում սեփական ժողովրդավար օրէնքներով ու դաւանութեամբ շարժուելու, այսինքն՝ խաւարի մէջ լոյս մատուցելու իրաւունքը, քանի որ ազատութիւնն ու ժողովրդավարութիւնը եղել են մեր առաջընթացը խթանող եւ ինքնութիւնը պահպանող գերագոյն պայմանները: Հայաստանեայց Եկեղեցին, իր ապակեդրոն ու ժողովրդավար կառոյցով 1700 տարի պահպանելով ու է՛լ աւելի բիւրեղացնելով մեր ժողովրդի հոգեբանութեան մէջ հայկազունեաց ժամանակներից շարունակ տրոփող ազատութեան, անկախութեան ու ժողովրդավարութեան բնական որակները, տեսնչ ու բաղձանքը, դրանք դարձրել է հայութեան արեան մէջ ամրագրուած հոգեբանական ու կազմախօսական անօտարելի եւութիւն:

*Շարունակելի
Ռաֆայէլ ՀԱՍԲԱՐՁՈՒՄԵԱՆ
Պատմական գիտ. թեկնածու*

ԿԻՑ սեմյակում

Սկիզբը՝ թիվ 2

- Տե՛ր հայր, սիրո մասին մեր գրույցում հայանցիկ անդրադարձանք Պողոս առաքյալի «Սիրո օրհներգին» (Ա Կորնթ. ԺԳ 1-13): Ես առաջարկում եմ մեր երկխոսությունը շարունակել՝ քայլելով «Սիրո օրհներգի» շավիղներով: Ըստ Պողոս առաքյալի՝ առանց սիրո փուչ ու սուտ են քրիստոնեական բոլոր առաքիլությունները, եւ առհասարակ բոլոր բարի գործերն իզուր են, քանզի այնտեղ, ուր բացակայում է սերը, թագավորում է չարը՝ իր բոլոր կործանարար ստորոգելիներով՝ խաբեությամբ, նենգությամբ ու թունավոր որոգայթներով: Առաքյալը ոչինչ է համարում որեւէ շնորհ, որն իր մեջ սեր չունի. «Եթե խոսեմ մարդկանց լեզուները եւ հրեշտակներինը, բայց սեր չունենամ, կնմանվեմ մի պղնձի, որ հնչում է, կամ՝ ծնծղաների, որ դողանջում են» (Ա Կորնթ. ԺԳ 1): Կամ՝ «Եթե իմ ամբողջ ունեցվածքը տամ աղքատներին եւ իմ այս մարմինը մատնեմ այրվելու, բայց սեր չունենամ, ոչ մի օգուտ չեմ ունենա» (Ա Կորնթ. ԺԳ 3):

- Պողոս առաքյալի «օգնությանմբ» Դուք արդեն մասամբ պատճառաբանեցիք, թե ինչու եւ ինչպես առանց սիրո փուչ եւ իզուր են բոլոր բարի գործերը: Կարելի է, թերեւս, ավելացնել եւս մեկ պատճառ. սերը ունեցվածքը տամ աղքատներին...»: Մի՞թե բարձրագույն առաքիլություն չէ, երբ որ մեկը, իր ամբողջ ունեցվածքը վաճառելով, բաժանում է աղքատներին, ինչպես որ շատ սրբեր արեցին: Հիշենք ավետա-

ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԵՐ

Մեր հյուրն է Բյուրավանի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգեւոր հովիվ Ղազար քին. ՊԵՏՐՈՍՅԱՆԸ



րանական այն դրվագը, երբ Հիսուսը հարուստ երիտասարդին, ով բոլոր 10 պատվիրանները պահում էր, հենց այն պատգամը տվեց՝ հավիտենական կյանքը ժառանգելու համար. «Եթե կամենում ես կատարյալ լինել, գնա՛ վաճառի՛ր քո ունեցվածքը ու տո՛ւր աղքատներին...» (Մատթ. ԺԹ 21): Բայց անգամ այսպիսի սխրագործությունը կարող է ոչինչ ու դատարկ համարել առաքյալը, եթե այն չի արվում սիրով ու սիրուց մղված: Ուրեմն՝ Աստված ամեն բանի մեջ կամենում է սեր տեսնել: Քանզի եթե սերն առաքիլության միջից հանենք (լիկի ողորմություն, աղոթք, պահեցողություն թե մեկ այլ բան), այդ առաքիլությունն իրապե՛ս դատարկվում է: Մնում է դատարկ պատյանը, որը, հավատացե՛ք, շատ չի տարբերվում Տիրոջ՝ կեղծավոր փարիսեցիներին եւ օ-

րենսգետներին ուղղված «վայ»-երի տարափից, հատկապես այն մեկից, որով վերջիններին սնանեցնում է սպիտակեցրած գերեզմանների, «որոնք դրսից գեղեցիկ են երեւում, մինչ ներսից լի են մեռելների ոսկորներով ու ամենայն ապականությամբ» (Մատթ. ԻԳ 27): Ինչո՞ւ: Որովհետեւ ներսում սե՛ր չկար:

- **Եվ մի հետաքրքիր համեմատություն: Ասում է. «Եվ եթե ունենամ ամբողջ հավատը՝ մինչեւ իսկ լեռները տեղափոխելու չափ, բայց սեր չունենամ, ոչինչ եմ» (Ա Կորնթ. ԺԳ 2): Տե՛ր հայր, հնարավոր՞ է այդպիսի հավատ (լեռները տեղափոխելու չափ), որն իր մեջ սեր չունենա: Ի՞նչ հավատի մասին է այստեղ ասում առաքյալը:**

- Աստծուց մարդուն պարգեւված շնորհների շարքում իր առանձնակի տեղն ունի հավատքի

ամենագոր ուժով ամրագրված հրաշագործության շնորհը, որով հնարավոր է անգամ լեռները տեղափոխել: Եվ սակայն Աստված մարդուց առավելաբար պահանջելու է ոչ թե շնորհը, ոչ անգամ հավատքը, այլ պտուղը: Ըստ այդմ՝ նա, ով որ շնորհ ունենալով՝ պտուղ չունի, նման է այն թզենուն, որին Տերը չորացրեց (տե՛ս Մատթ. ԻԿ 18-19): Ի՞նչ թովիչ գեղեցկություն ունեւ ծառը հեռվից՝ իր կանաչ սաղարթով: Սակայն... անպտուղ էր: Իսկ ո՞րն է պտուղը: Որո՞շք են առհասարակ հոգեւոր պտուղները: Այս հարցի պատասխանը տալիս է դարձյալ Պողոս առաքյալը՝ այս անգամ գաղատացիներին ուղղված թղթում: Ասում է. «Իսկ հոգու պտուղն այս է՝ սեր, խնդություն, խաղաղություն, համբերություն, քաղցրություն, բարություն, հավատարմություն, հեղուկություն, ժուժկալություն. այսպիսի բաներին օրենք չկա» (Գաղատ. Ե 22- 23): Հոգեւոր պտուղները, ուրեմն, ըստ առաքյալի, ինն են՝ իրենց գլուխ ունենալով սերը: Այո՛, շատ լավ է, որ մարդը կարողանա քարոզել, բժշկել, լավ երգել կամ հրաշագործել, բայց... Դրանք շնորհներ են, սակայն ոչ պտուղ: Քրիստոսը մոտեցավ թզենուն՝ ոչ թե տերեւ փնտրելու (իմա՝ շնորհ), այլ պտուղ (իմա՝ սեր), որպեսզի ճաշակեր, Իր սովը հագեցներ: Եվ պիտի օրհնար այս թզենուն: Բայց չգտավ: Նույնն էլ այստեղ է. Աստված Իր սիրելի զավակներից ակնկալում է սիրո՞ պտուղ: Ու եթե մարդը սեր չունի, մնացածը պղնձի դատարկ հնչյուն է կամ ծնծղայի դատարկ դողանք, ինչպես որ առաքյալն է ասում իր «Օրհներգում»:

- Այնուհետեւ Պողոս առաքյալն սկսում է «բնութագրել» սերը՝ ինչպիսին է իսկական, աստվածային սերը, եւ ինչպիսին չի կարող լինել այն: «Սերը համբերող է, քաղցրաբար է...»: Խնդրում եմ, տե՛ր հայր, խոսեք սիրո եւ համբերության «փոխհարաբերության» մասին:

- Դարձյալ պիտի հիշենք Տիրոջ բարոյական բարձրագույն պատվիրանը՝ «Սիրեցե՛ք ձեր թշնամիներին»: Թշնամու հանդեպ սերն արդեն իսկ անսահման համբերության արգասիք է: Զե՛ որ համբերության պակասը սովորաբար առավելագույնս դրսևորվում է հենց թշնամու հետ շփման մեջ: Հիշո՞ւմ եք, երբ Պետրոսը հարցրեց Հիսուսին. «Տե՛ր, քանի՞ անգամ, եթե եղբայրս իմ դեմ մեղանչի, պետք է ներեմ նրան. մինչեւ յո՞թն անգամ» (Մատթ. ԺԸ 21): Ինքը՝ Պետրոսը, թերեւս իր մտքում ուներ մի սանդղակ, որով չափում էր ներողամտության հնարավոր սահմանը: Այս դեպքում դա յոթն էր. չէ՛ որ հարցրեց՝ մինչեւ յո՞թն անգամ: Ի դեպ, 7 անգամ ներելն էլ մարդու համար բավական դժվար է: Իսկապես էլ, եթե մենք ուշադիր զննենք մեր կենցաղավարությունը, կտեսնենք, որ նման դեպքերի համար առավելագույնը 3 թիվն է ամրագրված մեզ մոտ: Ասում ենք՝ մեկ, երկու, երեք... Է՛հ, մինչեւ ե՛րբ: Այսինքն՝ 3-րդի վրա մեր՝ մարդկային համբերությունն արդեն սպառվում է: Առաքյալը, անկասկած, ավելի ներողամիտ է, լայնախոհ. ասում է՝ 7 անգամ: Ըստ Պետրոսի՝ մեղանչած եղբորը յոթ անգամ ներելու համար չափազանց մեծ զորություն ու սեր է անհրաժեշտ: Եվ այս դեպքում էլ տեսնում ենք աստվածային ներողամտության ու սիրո առատությունը, որը սահման չունի: Հիսուսը նրան ասաց. «Զեզ չեմ ասում, թե՛ մինչեւ յոթն անգամ, այլ՝ մինչեւ յոթանասուն անգամ յոթը» (Մատթ. ԺԸ 22):

Շարունակությունը՝ էջ 8

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Սկիզբը՝ էջ 4

Ի՞նչ է լինելու այս աշխարհի հետ,- Ինչպե՛ս իմանաս: Ի՞նչ է բուսնելու այս թշվառ հողին: Եվ ի՞նչ լեզվով են խոսելու այստեղ... Կրակն ես ընկել մտքերի ձեռքից: Ազատո՞ւմ չկա: Եվ պրծո՞ւմ չկա» («Անորոշություն»):

Այսպես ավարտվում է «Դարակեսի պարգեւներ» շարքը, ուր պարգեւը համարժեք է տագնապին:

Հաջորդում է «Ողջույնի քմայքներ» շարքը: Եվ ինչպես «Դիմակներ» շարքում, այստեղ եւս նախորդ շարքի կուտակված լարվածությունն սկսում է թեթեւակորեն թուլանալ: Տեղատվության եւ մակընթացության օրենքն ամբողջ գրքի համար, փաստորեն, դառնում է օրինաչափություն: Թեթեւ հանդիսանքով Պ. Սեւակն իր բարի ողջույնի խոսքն է ուղղում մարդկանց՝ «Բարեւ», «Բարի լույս», «Բարի աջողում», «Բարի իրիկուն», «Բարի գիշեր», «Բարի գալուստ», «Բարի ճանապարհ»: Շարքի տրամաբանությունը դարձյալ առնչվում է համատարած լույսին, որի խտացումն այս պարզ տողերն են. «Լույսը բարի է, եւ բարին լույս է»: Իսկ դա այլ մեկնությամբ նշանակում է, թե աշխարհում «Ճշմարտությունը չի՝ հետազոտվում. ճշմարտությունը ապրվում է լոկ»:

«Եղիցի լույս» գրքում Սեւակի մարդախուզական հայացքը շարունակվում է «Նորից չեն սիրում, սիրում են կրկին» սի-

րային շարքում, որին հաջորդում է «Աստծու քարտուղարը» շարքը: Աստծու քարտուղարը ինքը՝ բանաստեղծն է: Նա՛, ով մարգարեի ու գուշակի կերպարանքով իրավունք է ձեռք բերել խոսելու մարդկության բախտից ու ճակատագրից, լույսից ու անորոշությունից: Պատասխանատվության լարվածությունը հասնում է գագաթնակետին, եւ բանաստեղծը խոսում է բոլոր նրանց ձայնով. «Ովքեր մենակության մեջ Միանգամից են ողջ մարդկության հետ նստում գրույցի», «Ովքեր այս երկրագնդի պտույտն զգում են կրունկով իրենց...»: Բանաստեղծը վերջում դարձյալ ամբողջ մարդկությանը կոչում է զգնություն եւ հանուն նրա գնում սխրանքի:


«Եղիցի լույս» ժողովածուն Պ. Սեւակի սխրանքն էր ընդդեմ այն ամենի, ինչը անդեմացնում, ստորացնում, վիրավորում, վարկաբեկում եւ, ի վերջո, ոչնչացնում է մարդ արարածին ու տրորում նրա արժանապատվությունը:

Մարդերգությունը դարձավ ժամանակի հայ պոեզիայի բովանդակային հիմնական գիծը: Բոլորը որոնում էին կենդանի իրական մարդուն: Մինչ «Ներքող մարդուն» շարքի բանաստեղծություններն ի մի բերելը՝ Գ. Եմինը գրեց այսպիսի տողեր. «Ես մարդկությունն էի երգում՝ Զիմանալով ինչ է... մա՛րդը. ...Զաջ գիտեի ես երթուղին, Չէ՛ի տեսել ճանապարհը»:

Մարդու գեղարվեստական պատկերման ճանապարհին թեւէ Գ. Եմինը չիա-

սավ անհատականացված մարդու պատկերման, ինչպես, ասենք, Պ. Սեւակը, եւ ներքողեց մարդկայնության ընդհանուր տրամադրություններ՝ «Ես սիրում եմ մարդուն, մարդկայինը», այնուամենայնիվ, իր խոսքի մեջ պահպանեց ժամանակի մարդուն բնութագրող հիմնական գծերը: Ժամանակի պատմական փոփոխությունների հետ համատեղելով դարի տեխնիկական առաջընթացի արտաքին հատկանիշները՝ Եմինը մարդուն փորձում է տեսնել՝ ճանաչել մի կողմից իր ժամանակակից գիտատեխնիկական ձեւերի մեջ, մյուս կողմից՝ իր ավանդական նկարագրի: Ժամանակակից ձեւի խորհրդանշաններն ինքնաթիռն ու հրթիռն են, որ բերում են արագության ու շարժման այնպիսի թափ, որ «մի կյանքի մեջ անցավոր» մարդը «կյանքեր ապրի հազարավոր» («Ես այնքան եմ հարուստ արդեն»): Բայց ահա թե ինչ է պարզում պարզ հակադրությունը. «Մենք «Տու»-ով վեր էինք հառնում Եվ... ծիծաղո՞ւմ կամի վրա. <...> Ասող չեղավ մեր սերնդին,- Թե մինչ ճախրո՞ւմ ենք մենք դատարկ, Նա՛, իր ամեն ծույլ պտույտին, Արդար հա՛ց է կիտում իր տակ»:

Ստեղծվում է իրերի ու մարդու յուրահատուկ համակցություն. ներքին պայքար, ուր իրը երբեմն տեր է դառնում իր տիրոջ վրա: Եվ ծնվում են այսպիսի տողեր. «Այս առանց այն էլ մարդաշատ հողում» սոսկ մարդն է, որ «Եժան է ռումբից ու արկից» («Զե՛զ, սիրելի՛ս»): Եմինը, ինչ-



պես Սեւակը, գրողի իր պարտքը տեսնում է մարդուն իրերի այդ գերությունից ազատելու մեջ, որպեսզի ատոմային զենքով, ցեղասպանությամբ, մարդուն խոշտանգող հավատաքննությամբ հանկարծ չվերադառնա «քաղաքակիրթ միջնադարը»: Դրա վկայությունն է «Կեսոն քաղաքը». քանեքորդ դարի վրա արշավող միջնադարի աղետի գիտակցությամբ Գ. Եմինը եւս խիստ կարեւորում է բանաստեղծի դերը եւ այսպիսի դիմում-պահանջ ուղղում ապագային. «Օգնի՛ր ինձ կյանքում ուղիղ ընթանալ... Զթվալ արդար՝ եղած մեղավոր, Մեղավոր պահին հանցանքը քավել...» («Գալիքին»):

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՀՈՎԻՎՆ ՈՒ ՆՐԱ ՀՈՏԸ

ՔՐԻՍՏՈՆՆԵՐՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԸ

Ձեր հարցերին պատասխանում է Կոմիտաս վրդ. ՀՈՎՆԱՆՅԱՆԸ
Ձեր անունից հարցերն ուղղում է մեր թերթի արտահաստիքային թղթակից Անժելա ԿԱԶԱՏՐՅԱՆԸ

- Հայր սուրբ, ո՞րն է քրիստոնեական կրոնի վեհությունը, մեծությունը: Ո՞րն է քրիստոնեության բերած լույսը մարդկային կյանք:

- Կարծում եմ՝ քրիստոնեության իմաստը, նշանակությունը հասկանալու համար պետք է անպայման անդրադառնանք Հովհաննու Ավետարանի 3-րդ գլխի 16-րդ համարին, որտեղ ասվում է, որ «Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ իր միածին Որդուն տվեց, որպեսզի ով Նրան հավատա, ընդունի հավիտենական կյանքը»: Այստեղ կարելի է շեշտադրում կա. ասվում է. «Աստված այնքան սիրեց աշխարհը...»: Ուրեմն քրիստոնեությունը սիրո վարդապետություն է, որ գալիս է մարդու մեջ երկու բան շեշտադրելու եւ ձեռավորելու: Առաջին՝ այն, որ մենք Աստծո որդիներն ենք, Աստծո սիրո արդյունքը, եւ երկրորդ՝ որպեսզի կարողանանք փոխադարձել մեր զգացումները մեր երկնավոր Հոր նկատմամբ, պիտի կարողանանք սերը մեր մեջ ամրագրել, առանց որի անհնարին է ամբողջական իմաստով ընկալել եւ ըմբռնել քրիստոնեությունը:

- Մերօրյա մարդու պատկերացումները քրիստոնեության վերաբերյալ սխալ են: Շատերը կարծում են, որ քրիստոնեությունը թույլների կրոնն է: Ինչո՞վ է պայմանավորված այս մտայնությունը:

- Մարդիկ քրիստոնեական վարդապետությանը մեկ կողմով են նայում: Քրիստոնեական վարդապետության մեջ քաղաքական խնդիր չկա: Մեկ դարձվածք կա միայն, որն է՝ «Տուր կայսրին՝ կայսեր, եւ Աստծուն՝ Աստծուն»: Քրիստոսը Նույնիսկ ինքը տվեց իր տուրքը, ինչը խոսում է այն մասին, որ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է իր պետության առաջ իր պարտականությունները կատարել: Կայսրը

խորհրդանշին է պետության, երկրի, ուրեմն այն, ինչ քեզանից պահանջում է պետությունը, ազգային շահը, դու պարտավոր ես մատուցել... Իսկ ո՞րն է Աստծուն տրվելիքը. առաջին հերթին՝ սիրի՞ր քո նմանին, նաեւ այն ամենը, ինչ կամենում ես, որ մարդիկ անեն քեզ, դու էլ այդպես վարվիր նրանց հետ: Երբ ասվում է՝ սիրիր թշնամուդ, այստեղ քաղաքական կոնտեքստ չկա: Հին Կտակարանում կար «եղբայր» դարձվածքը: Քրիստոսը մեջբերում է հինկտակարանյան՝ «սիրի՞ր եղբորդ քո անձի պես» պատգամը, ինչը նշանակում է, որ հրեայի համար իր եղբայրը նա էր, ով Աբրահամի զավակն էր, ուրեմն այստեղ շեշտվում է «ես եւ իմ ազգակիցը» գաղափարը. խնդիրը վերաբերում է ներազգային հարաբերություններին: Հետեւաբար քրիստոնեությունը պետք է ճիշտ ընկալվի, որպեսզի նրա կոնտեքստից դուրս մեկնություններ չլինեն: Այդպես էլ քրիստոնեական սերը կամ ներողամտությունը ոչ թե քաղաքական ատյանի վրա պետք է դրվի ու դատափետվի, այլ ընկալվի մարդկային-ընկերային մակարդակի վրա:

- Հայր սուրբ, իսկ որո՞նք են քրիստոնեության բերած օգուտները, կարո՞ղ ենք ասել, որ քրիստոնյան ամենաուժեղ, ամենահամարձակ, կամային հատկություններով օժտված մարդն է: Չէ՞ որ թույլ մարդը չի կարող ներել... Ուրեմն ինչպե՞ս է փոխվում մարդու կյանքը:

- Քրիստոնեության մեջ ներողամտությունն ուներ իր սահմանները. ամեն ինչ չէ, որ ներվում էր: Օրինակ՝ հայիոյությունը ներելի էր, բայց եթե այն ուղղված է Սբ Հոգու դեմ, դառնում է աններելի: Շատ անգամ մարդիկ դիմացինին հայիոյում են՝ առանց անդրադառնալու սբ Պողոս առաքյալի հետեւյալ խոսքին, որ ասում է. «Չգիտե՞ք, որ Աստծու տաճար եք դուք, եւ Աստծու

զին է բնակվում ձեր մեջ...» (Ա Կորնթ. Գ 16): Ուրեմն տեսնում ենք, որ այստեղ կան երեւոյթներ, որոնք մարդուն դնում են բարոյականության սահմանների մեջ, իսկ բարոյականությունը ունեցող կերպարն ինքնին ավելի զորավոր է: Քրիստոնեությունը գալիս է մեզ բացատրելու, որ այս կյանքը ժամանակավոր գոյության է, որից հետո կյանքիդ հիմնական իմաստը կամ գոյության ցանցը շարունակականությունը դառնում է հավիտենականը: Դա արդեն մարդուն հնարավորություն է տալիս ժամանակավորին չկառելու, այլ այդ ժամանակավորն իմաստավորելու այնպես, որ հավիտենականը դառնա իր համար նշանակություն եւ իմաստ:

- Փաստորեն, հավիտենական կյանքի հանդեպ ունեցած անխախտ հավատի հանգամանքն է օգնում քրիստոնյա մարդուն չերկնջել մահվանից:

- Այստեղ մահից վախենալու խնդիր չկա. ամենակարեւորը հավիտենական կյանք ունենալն է, բայց որտե՞ղ... Բարիները հավատում են, որ իրենց հավիտենական կյանքը պիտի լինի Աստծո արքայության մեջ, մինչդեռ չարերի կյանքը հավիտենական տառապանքն է դժոխքում: Ուրեմն այս փաստը մարդու կյանքի գոյնընթացը ձեռավորում է այնպես, որ մարդն իրենից վախի չարը, որը չի նշանակում պասիվ կյանք ունենալ, այլ ապրել այնպես, որ քեզ համար նյութական անկարելի լինի, բարոյական, հոգեւոր արժեքներն իմաստավորվեն, որովհետեւ, ինչպես սուրբ Պողոս առաքյալն է նշում, «Անիրավներն Աստծո արքայությունը չեն ժառանգելու» (Ա Կորնթ. 2 9):

- Մարդը, քրիստոնեության դառնալով, վերափոխվում, վերածնվում է որպես «նոր մարդ»՝ թոթափվելով հին կյանքի կապանքներից՝ վատ սովորություն-



ներից, մարդկային դիմագիծն աղճատող մի շարք մոլություններից, մեղքերից: Ի՞նչ փորձություններ են սպասվում նրան այս «փշոտ», բայց փրկաբեր ճանապարհին:

- Քրիստոնյայի կյանքը փշոտ է. այդպես չէ գիտակից մարդու համար: Փշով է այն պարագայում, երբ ինձ համար կյանքը նյութական, ֆիզիկական իմաստ ունի, որովհետեւ այն, որ Քրիստոսն իր ուսմունքով ինձ դնում էր բարոյական սահմանագծի մեջ, ինքնին խոսում է այն մասին, որ եթե ես միևնույն ժամանակ նյութական, մարմնական մարդ էի, սկսում էի տանջվել, որովհետեւ ինձ թույլ չէի տալիս անբարոյականություն, հարբեցողություն, խաբեբայություն, գողություն եւ այլ մեղքեր: Քրիստոսը երբեք չասաց՝ մի կերեք, այլ ասաց, որ որկրամոլությունը մեղք է, երբեք չասաց՝ մի ծախսեք, այլ ասաց, որ զեխությունը մեղք է, չասաց՝ մի խմեք, այլ ասաց, որ հարբեցողությունը մեղք է եւ այլն: Ուրեմն մենք տեսնում ենք քրիստոնեության բարոյական կերպարի մեջ ճիշտ մարդու ձեռնարկը մարդու կյանքը: Քրիստոսն ասում է, որ մեզ համար բարոյական-հոգեւոր պետք է իմաստավորվի եւ ոչ՝ անբարոյականությունը, որովհետեւ, երբ կարդում ենք արքայություն չմտնողներին վերաբերող խոսքերը, տեսնում ենք հետեւյալ բացասական երեւոյթները, որոնք սբ Պողոս առաքյալը նշել է. «Մի եղեք խաբեբա, պռնակ, կուռք պաշտողներ, շնացողներ (եթե դու շան նման ես, դադարում ես Աստծուն

նմանվելուց, որովհետեւ Աստված մարդուն իր պատկերով ստեղծեց), մի եղեք իզաջողներ (այն, ինչն այսօր փառաբանվում է), մի եղեք արվամուլներ (այն, ինչն իբրեւ արեւմտյան կեղծ արժեք՝ տարածում են՝ փորձելով մեր հրաշալի ազգի սերունդը այլասերել արվամուլությամբ, միասնականությունով), մի եղեք գողեր (այն, ինչն այսօր սովորեցնում են մեր սերիալները՝ «գող հովիտներ ու գող գործեր» փառաբանելով), մի եղեք ագահներ, հարբեցողներ, բամբասողներ, հափշտակողներ, որովհետեւ այդպիսիք Աստծո արքայությունը չեն ժառանգելու» (տե՛ս Ա Կորնթ. 2 9-11): Ուրեմն տեսնում ենք, թե որքան հստակ է փշի ճանապարհը:

- Գայթակություններով լի մեր ժամանակներում, երբ ամեն քայլափոխի հանդիպում ենք տարաբնույթ փորձությունների, ինչպե՞ս է հնարավոր պահել քրիստոնեական դիմագիծը:

- Քրիստոնեական դիմագիծը կարող ես պահել միայն մեկ պարագայում, երբ կատարյալ հավատը ունես, որովհետեւ հավատը չի կարող կես-կես լինել, չես կարող «երկու տիրոջ ծառայել»: Սա նշանակում է կերպարի, էության հստակեցում: Եթե դու քեզ հայտարարում ես քրիստոնյա, այն պետք է ոչ թե ձեռով, այլ բովանդակությամբ իմաստավորես, իսկ քրիստոնեության բովանդակությունը քո ապրած կյանքի գոյնընթացն է, առանց որի անհնար է քրիստոնեությունը պատկերացնել ու ապրել:

Շարունակելու էջ 8

ՆԱՅՈՑ ՑԵՂԱՄԱՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԵՎՄՏԱՆԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՎՐԱ

Սկիզբը՝ էջ 3

Մամուլում սկսեցին հանդես գալ երիտասարդ հայ բանաստեղծներ, որոնք հիմնականում գրում էին սիրո, արժանապատվության, բայց ամենաշատը՝ հայրենիքի մասին: Հարկ ենք համարում նշել, որ այդ նորահայտ բանաստեղծների զգալի մասն այնքան էլ աչքի չէր ընկնում տաղանդով: Ինչ վերաբերում է եղեռնից հետո ստեղծված հայ արձակին, ապա այն բավականին պարզունակ էր, իսկ դրաման գրեթե գոյություն չուներ: Մի խոսքով՝ ցեղասպանությանը հաջորդած առաջին տասնամյակն արդի հայ գրականության ամենաանպատիվ շրջանն էր: Այս իրողության բացատրությունը հարկ է որոնել հայ ժողովրդի եւ նրա առաջնորդների ընդհանուր տրամադրության մեջ: Անցյալում հա-

յերի հոգեբանության մեջ դրսևորվել էր «թշնամական» աշխարհից մեկուսանալու միտում: Այս հոգեվիճակը կարելի է բնութագրել իբրեւ հիվանդագին կասկածամտություն, իսկ կոտորածներն ու գաղթը էլ ավելի սաստկացրին այդ հոգեբանական վիճակը: Հայերի մեջ սկսեց դրսևորվել անհանդուրժողականությունը, այլատյացությունը, ավտորիտարիզմը եւ մաքրամոլությունը (ավանդապաշտություն): Նշված երեւոյթները գնալով ավելի ու ավելի էին խորանում հայ ազգի մեջ: Հայերի հոգեբանական նկարագիրն ավելի լիարժեք դարձնելու համար հավելեց, որ նրանք ատելությամբ էին լցված թուրքերի դեմ եւ այն աստիճանի էին սարսափած նրանցից, որ դա արդեն խանգարում էր նրանց ապրել: Եղեռնից



փրկված հայերը պարզապես բեւեռված էին հայոց ցեղասպանության վրա եւ ուրիշ ոչ մի բանի մասին ունակ չէին մտածելու: Հայության մտածելակերպը մի

տեսակ նեղացել էր, նրանք դեմ էին փոփոխություններին եւ հնազանդ էին իշխանություններին: Իշխանություններ ասելով՝ նկատի ունենք Հայ Եկեղեցին եւ հայ-

կական քաղաքական կուսակցությունները, որոնք հայության համար օրհասական պահին ստանձնել էին ազգին կամ ավելի ճիշտ՝ դրա փրկված մասին ուղիորդելու ծանրագույն պարտականությունը: Հայերը, մի տեսակ, մեջքով էին շրջվել աշխարհի կողմը եւ առաջնորդվում էին «հայապահպանում», «հայ հոգի», «ներմակ ջարդ», «կենսապայքար» կարգախոսներով: Հայերը նաեւ իրենց իրենց մեկուսացրել էին օտար մշակույթներից՝ ապարդյուն փորձելով վերածնել կամ առնվազն պահպանել հին ու բարի օրերի հերոսական իդեալները, ցեղասպանությանը նախորդած ազգային կյանքի հիշողությունը:

Շարունակելի
Տիգրան ՄԱՆՈՒՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ՀՈՎԻՎՆ ՈՒ ՆՐԱ ՀՈՏԸ

ՔՐԻՍՏՈՆԵՌՈՒԹՅԱՆ ԼՈՒՅԱԸ

Սկիզբը՝ էջ 7

- Հայր սուրբ, Քրիստոսն իր հետևորդներին պատվիրում է լինել «երկրի աղը եւ աշխարհի լույսը» (տե՛ս Մատթ. Ե 13-15): Մեր օրերում ինչպե՞ս է հնարավոր այս պատվիրանի իրագործումը:

- Ի՞նչ է նշանակում աղ: Աղը կերակրին համ տվողն է: Լինել աղ նշանակում է չափավորության գիտակցությունը պահել ու ապրեցնել ընդ մեզ՝ կարողանալով փոխանցել նաեւ ուրիշներին: Սակայն աղն ինչքան էլ հրաշալի լինի, չափից ավելին վտանգավոր է ու լեղի: Ուրեմն մենք պիտի կարողանանք կյանքի բնական բալանսն այնպես պահել, որ կյանքի «համը» ո՛չ անհամանա, ո՛չ էլ՝ լեղիանա: Իսկ ի՞նչ ասել է՝ լինել լույս: Քրիստոսն ասում է, որ խավարի մեջ են տեղի ունենում բոլոր անբարոյականությունները՝ սպանություն, զոհություն, կոդուպտ... Եվ խավարը խորհրդանշել է չարի: Եվ երբ դու քո կյանքով դառնում ես լույս, նմանվում ես միանում ես Քրիստոսին, ինչպես ինքն ասաց. «Դուք իմ մեջ եք, եւ ես՝ ձեր մեջ»: Քրիստոսը մեզ սովորեցրեց՝ ասելով. «Ես եմ աշխարհի լույսը» (Յովհ. Ը 12): Ուրեմն քանի

որ բուն Լույսը մեր մեջ է ապրում, մենք էլ ամեն մեկս դառնանք աշխարհի լույսը՝ լուսավորվելով այնպես, որ Քրիստոսի լույսը ճառագայթի մեր գործերում եւ մեր խոսքի մեջ:

- Ըստ Ձեզ՝ քրիստոնեության բերած Լույսի կարեւորությունը մեր հասարակության մեջ որքանո՞վ է գիտակցված, արդո՞ք գիտակցում ենք այդ փրկաբեր Լույսի խորհուրդն ու էությունը մեր կյանքում:

- Կարծում եմ՝ ո՛չ, որովհետեւ այսօր քրիստոնեությունը ձեռով է իմաստավորված եւ ոչ թե բովանդակություն, իմաստ եւ համոզում է դարձել, բայց չէ՛ որ քրիստոնեությունը մոմավառություն չի նշանակում: Մոմ վառելն այսօր դարձել է քրիստոնեական արտահայտության ձեռք, որը նյութապաշտություն է: Նյութի մեջ հոգի, իմաստ պետք է դրվի, որպեսզի քրիստոնեությունը մնա քրիստոնեական արժեք եւ ոչ թե դրանից դուրս ընկալի: ...Ուրեմն մենք պետք է կարողանանք ճիշտ ընկալած ճիշտ քրիստոնեությունն ապրել, մի բան, որը դժբախտաբար այսօր հեռու է մեզանից:

- Ուրեմն ո՞րն է ճանապարհը, ուղին:



- Ճանապարհը մեկն է: Քրիստոնեությունը մեզ հնարավորություն տվեց ապաշխարության, երբ մարդն անդրադառնում է իր կատարածին, այսինքն՝ ամեն մեկ անձ ամեն գիշեր գլուխը բարձիս դնելուց իրեն հարց պետք է տա. ո՞վ եղա ես մի ամբողջ կյանքի ընթացքում, 24 կամ 16 ժամվա ընթացքում. եղա մարդ՝ հոգեւոր-բարոյական կերպարո՞վ, թե՞ եղա պարզապես արարած՝ կենդանիների նման: Ուրեմն սա մեզ հնարավորություն է տալիս հասկանալու, թե ով եմ ես եւ որքանով եմ արժանի Հայր կոչելու մեր երկնավոր Հորը, Ով իր հայրությամբ իմաստ է տալիս իմ՝ որդի լինելու գաղափարին:

- Կարո՞ղ ենք ասել, որ մենք այսօր ազ-

գովի կարիքն ունենք ապաշխարության, հոգեւոր վերածնության, քրիստոնեական արժեքներով ապրելու:


- Անշուշտ: Մենք այսօր ազգովի անդրադարձի կարիքն ունենք, թե ինչու այս բոլոր դժբախտությունները եկան մեր գլխին, արդյո՞ք պատճառը մեր մեջ չէր: Կյանքը նման է բուսմանը. ինչ քեզանից դուրս է նետվում, հետո գալիս է քո առաջ: Եթե քեզանից չարություն է դուրս գալիս, այն գալիս է քո առաջ: Ինչ որ ցանես, այն էլ կինձես: Մենք մոռանում ենք աստվածաշնչյան կարեւոր հատվածները՝ ի մասնավորի Երկրորդ Օրենք գրքի 28-րդ գլխի հրաշալի հատվածը, որտեղ Աստված մեզ սովորեցնում է, թե ինչպիսին պետք է լինի յուրաքանչյուր քրիստոնյա, հավատացյալ մարդ: «Եթե լսես մեր Տեր Աստծու ասածները, որ ես այսօր ձեզ եմ պատգամում, այն է՝ հետևելով Նրա պատգամներին՝ կատարեք դրանք, ապա Տեր Աստվածը ձեզ երկրի բոլոր ազգերից ավելի բարձր կդասի: ...Օրինյալ կլինի քո ամեն ինչը...»: Իսկ 15-րդ համարում ավելացնում է. «Իսկ եթե չլսես քո Տեր Աստծու ասածը՝ չպահես ու չկատարես Նրա բոլոր պատվիրանները, ապա այս անծթերը կթափվեն քո գլխին», եւ անծթերի մի ողջ շարան է բերում: Հետեաբար մենք պետք է վերջապես հասկանանք. եթե մենք Աստծու հետ ենք, լինենք Նրա Նվիրյալ զավակները, քանի որ Աստծուց հեռանալով՝ դառնում ենք զավակները չարի, սատանայի:

ԼԱՏԻՆԱԿԱՆ ՏԱՌԵՐԻ ՇՈՒՐԸ

Սկիզբը՝ էջ 5

Մեր ընկերները հաղորդում են, որ ուղղագրության պատճառով մեր խորհրդային հրատարակությունները չեն տարածում: Արդեն միայն այս հանգամանքը բաւարար ծանրակշիռ է վերացնելու նոր ուղղագրությունը: Թանգի պարզուեց, որ մեր ամբողջ քարոզչությունը այդ ուղղությամբ ծախսողուեց: Պարզ է նաեւ, որ մենք չենք ծախսի մարդկային եւ նիւթական միջոցներ յետագայ քարոզչության համար:

Հայաստանում խորհրդային իշխանության հենց չորրորդ տարեդարձին մենք, յիշելով մեր յաջողությունները շատ ճակատներում, բնաւ չենք խամրեցնի մեր տօնը՝ խոստովանելով մեր պայմանական անյաջողությունը ուղղագրության ռեֆորմի գործում: Մենք այդ անյաջողությունը պայմանական ենք անուանում, քանի որ անցնելով լատինական գրի՝ մենք այժմ մենա ուղղագրությունը կարող էինք դիտել իբրեւ անցումային աստիճան: Որքան շուտ արխիւ կյանձնենք «Սահակի եւ Մեսրոպի» քառակուսի եւ անառողջ եւ տգեղ գրերը, այնքան շուտ կազատուենք Աբեղեանի ուղղագրությունից: Եթե դա լինի՝ Աբեղեանի ռեֆորմը իր ծառայությունը կմատուցի: Իսկ եթե արեղեանական ուղղագրությունը ընդունուած է «յաւերժի» համար, ապա դա որոշակի յետընթաց է: Արդեն չիտելով այն մասին, որ Աբեղեանը մեզ վերադարձնում է գրեթէ 12-րդ դար (Մ. Աբեղեանը, հեղինակը Սակինցեանի «յայտնությունները», գրում է. «Վերջապէս՝ ընկեր Պ. Սակինցեանը մի յայտնություն էլ է անում նոյն յօդուածի մէջ. «Աբեղեանը մեզ վերադարձնում է գրեթէ 12-րդ դարը»: - Երեւի, նա, վերջին երկուսուկէ տարուայ ընթացքում հայ ձեռագիրների ուսումնասիրություն կատարելով, գտել է, որ Ներսէ Շնորհալին եւ ուրիշները 12-րդ դարում գրել են «ակոս, հանդես, կավ, նվաստ, լոյս, հաստ, սենյակ, ամսորայ, յոթն, արյուն, գա, գրեյի, լեկ» եւ ոչ թէ «ակոս, հանդես, կաւ, նուաստ, լոյս, յստակ, սենեակ, ամսարեայ, եաւթն կամ եւթն, արեւն կամ արիւն, գայ, գրեի կամ գրեի, եկ»... Մ. Աբեղեան, Երեւն, Ը., Երեւան,



Մերձեւ Բագդատեի առաջարկած այբուբենը

1985, էջ 491-492), նրա ուղղագրությունը այնպես է այլանդակել հայերէն բառերի դեմքը, որ նոյնիսկ երկուսուկէ տարի կարդալով բացառապէս նոր ուղղագրությամբ՝ շատերը մինչեւ օրս չեն կարողացել յարմարուել դրան:

Հայաստանում խորհրդային իշխանության չորրորդ տարեդարձին Հայաստանի լուսժողովատը պիտի հերթի դիւ ռեֆորմի շարունակումը: Թող մշակուեն նոր գրեր եւ թող հեղինակներին իրաւունք տրուի իրենց յօժար կամքով տպագրել կա՛մ հայկական, կա՛մ լատինական տառերով, ինչպէս դա այժմ արւում է Ադրբեջանում: Մենք չենք կասկածում, որ լիակատար ազատութեան պարագային ամենակարճ ժամկէտին յաղթանակը կլինի լատինական գրերինը: Եւ հեշտ կլինի արտասահմանի հայերին յակել ընդունելու լատինական գրութիւնը, քան Աբեղեանի ուղղագրութիւնը:

Ուրեմն, հայերն ունեն կիսափոխուած ուղղագրութիւն (կիսա-ռեֆորմ), իսկ թիւրքերը հին արաբականի կողքին ունեն նոր լատինական գրեր:

Հայոց ուղղագրութեան լիակատար ռեֆորմից յետոյ հնարաւոր է օգտագործել թիւրքերի ընդունած լատինական գրերը: Ցաւօք, այդ հարցին պիտի բացասաբար պատասխանենք: Նախ, թիւրքերը հիմք են ընդունել ոչ թէ լատիներէն, այլ ֆրանսիական այբուբենը: Երկրորդ, լատիներէնում եղած եւ թիւրքերէնի չունեցած հն-

չիւնների գրերն օգտագործուած են որպէս այլ հնչիւնների գիր, այն պարագային, երբ, ասենք, հայերէնում դրանց համապատասխանում են նոյն որոշակի հնչիւնները, ինչ՝ լատիներէնում:

Այսպիսով, հայերը դեռ ընդհուպ չեն մօտեցել լատինական գրերի գործածութեան հարցին, իսկ թիւրքերը շատ հեռու չեն գնացել իրենց նոր այբուբենի պրոպագանդի գործում: Վրացիք այդ հարցը նոյնիսկ չեն առաջադրել:

Հարց է ծագում, այժմ չի՞ կարելի հանձնաժողով ստեղծել, թեկուզ Անդրկովկասյան ԿԳԿ (Կենտրոնական գործադիր կոմիտէ) մէջ, լիովին հեղինակաւոր լեզուաբաններով, մշակելու համար միասնական օրինակելի այբուբեն լատինական գրերի հիման վրայ՝ համապատասխան լրացուցիչ նշաններով, գրելու համար բոլոր կովկասեան լեզուներում եղած հնչիւնները, որ չկան լատինականում, եւ այն հնչիւնների համար, որ բացառապէս յատուկ են յիշեալ լեզուներից իւրաքանչիւրին:

Այդ գործի գլուխ կարելի է կարգել ակադէմիկոս Ն. Եա. Մառին, որ մօտակայ ժամանակներս սպասում է Թիֆլիսում: Հանրապետական լուսժողովատների գործուն սատարումով նոյն առաջարկը շատ հեշտ կարող է ոչ միայն յանգեցնել հարցի տեսականօրէն ճիշտ լուծման, այլեւ շատ շուտով կտայ գործնական պտուղներ:

Պատրաստեց

Նունե ԿՈՐՆԱՎԵՐԴԵԱՆԸ

ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԵՐ

Մեր հյուրն է Բյուրավանի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգեւոր հովիվ Ղազար քին. ՊԵՏՐՈՍՅԱՆԸ

Սկիզբը՝ էջ 6

- Առաջալը շարունակում է. «Մերը չի նախանձում, չի ամբարտաւանանում, չի գոռոզանում...»:

- Գոռոզությունն օտար է սիրո համար: Փոխարենը շատ լավ հասկանում է «ատելության լեզուն»: Սիրող մարդը չի կարող գոռոզանալ: Նա, ով իր սիրտը բացում է աստվածային սիրո առաջ, ով հասկանում է Քրիստոսի գոհագործության ճշմարիտ արժեքը, ամենախոնարհ մարդն է: Իսկ խոնարհությունն ու գոռոզությունը հակահիշներ են՝ անգամ «խիստ աշխարհիկ» ընկալմամբ: Գոռոզությունը, ուրեմն, ի հայտ է գալիս սիրո խապառ չգոյության պարագայում: Գոռոզությունը, ամբարտաւանությունը ե՞րբ է ծնվում. երբ որ մարդն իր սրտի մեջ սկսում է մտածել, որ դիմացինը վատն է, անարժան է կամ միայն արհամարհանքի է արժանի: Իսկ սիրով լցված սիրտը երբեք չի գոռոզանում, այլ հարածամ խոնարհության ու խաղաղության մեջ է:

- Եվ ահա շատ հուզիչ, երիցս ճշմարիտ ու խիստ քրիստոնեական մի բնորոշում իսկական սիրո՞՝ «Մերը իրենը չի փնտրում»...

- Ի դէպ, «իրենը չփնտրելն» ու չնախանձելը շատ նման են իրար, եթե «նախանձել» բառը ստուգաբանում ենք «նախ» եւ «անձ» ձեւերով, այն է՝ նախ (առաջինը) իր անձին: Ընդհանրապէս, բնական երեւոյթ է, երբ մարդը կյանքում եւ առօրյայում նախ իր անձի օգուտն է փնտրում: Բայց երբ որ իրենը փնտրելու ճանապարհին ոտնատակ է տալիս ամեն ինչ եւ ամենքին, նոյնն է, թէ Մերն է ոտնատակ տալիս: Ժողովուրդն ասում է. «Եթե քեզ նեղություն չտաս, դիմացինիդ բարիք գործել չես կա-

րող»: «Քեզ նեղություն տալ»-ը նույն «քոնը չփնտրելն» է: Մյուս կողմից՝ չէ՛ որ իրենը չփնտրելը, մերձավորի համար ջանալը, առհասարակ տալը, բաշխելը հոգեկան մեծ բավականություն են պատճառում մարդուն: Քրիստոնեական այս կեցվածքը դարեր ի վեր բնորոշ է եղել մեր ժողովրդին, նրա բնավորության կարեւոր բաղադրիչն է եղել, որն արտահայտվել է նաեւ իր ստեղծած հարուստ մշակույթի մեջ: Հիշո՞ւմ եք՝ Վահան Թեքեյանի բանաստեղծություններից մեկում այսպիսի միտք կա՝ «Ի՞նչ մնաց ինձ. միայն այն, ինչ որ տվի ուրիշին»: Եվ դարձյալ ուզում եմ շեշտել՝ խոսքը ոչ թէ պարզապէս տալու մասին է, որը կարող է լինել նաեւ սոսկ պարտականություն, այլ սիրով տալու...

Շարունակելի
Հյուրընկալեց
Հայկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՋԱՅԱՍԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկաթաբաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Քրիստոնյա Հայաստան»

թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ. փոստ՝ gh@etchmiadzin.am

web կայք՝

kh-tert.livejournal.com

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր.

19.2.2013 թ.

Տպաքանակը՝ 2100

Գինը՝ 50 դրամ